



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

PHCR

Primary Healthcare Reform Project

ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

**ԱՐԱՐԱՏԻ, ԱՐՄԱՎԻՐԻ ԵՎ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԵՐԻ ԱԱԴ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ
2008**



Մայիս, 2010 թ.

ՎԵՐԱՊԱՅՈՒՄ

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Սույն հրապարակման մեջ հեղինակի արտահայտած կարծիքները պարտադիր չէ, որ արտացոլեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

**ԲՈՒԺՅԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ
ԳՆԱՅԱՏՈՒՄ**

**ԱՐԱՐԱՏԻ, ԱՐՄԱԿԻՐԻ ԵՎ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԵՐԻ ԱԱՊ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԲՈՒԺՅԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԳՆԱՅԱՏՈՒՄ**

2008

Նախաբան

Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների (ԱՄԲ) ծրագիրը Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող հնգամյա (2005-2010թթ.) ծրագիր է, որն իրականացվում է «Էներջինգ մարկեթս գրուփ» (ԷՄԳ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2005թ. սեպտեմբերին շնորհված պայմանագրով: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել առողջության առաջնային պահպանման (ԱՄՊ) կայուն և բարձրորակ ծառայությունների սպառմանը՝ ի նպաստ հայ ընտանիքների առողջության բարելավման: Այս նպատակն իրականացվում է՝ աջակցելով Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարությանը (ՀՀ ԱՆ) ներդնել փաթեթ՝ կազմված վեց միջոցառումներից, որոնք առողջապահական բարեփոխումները կապակցում են ծառայությունների մատուցման հետ այնպես, որ մեկը մյուսին լրացնելով՝ ստեղծեն սիներգիկ արդյունք: Նշված վեց միջոցառումները ներառում են հետևյալը՝ աջակցություն առողջապահական բարեփոխումներին և քաղաքականությանը (այս միջոցառման բաղկացուցիչ մասն է բուժհաստատությունների վերանորոգումը և սարքավորումներով հագեցումը), ազատ հավաքագրում, ընտանեկան բժշկություն, բուժօգնության որակի բարձրացում, առողջապահության ֆինանսավորման բարելավում ու բնակչության ուսուցում, առողջության խթանում և հիվանդությունների կանխարգելում:

Ինչպիսի՞նք ներգործություն են ունենում այս միջոցառումները.. սա հաճախ հնչող, սակայն հազվադեպ ֆինանսավորվող հարց է: Բարեբախտաբար, ԱՄԲ ծրագիրը ներդրել է մի գործընթաց, որը պատասխանում է «ներգործության» հարցին. մշակվել է վեց հարցաշարերից բաղկացած մի փաթեթ՝ ծրագրի առաջընթացը վերահսկելու և արդյունքները գնահատելու նպատակով: Այս հարցաշարերից երեքն ուղղված են բուժհաստատությունների գնահատմանը և նախատեսված են նախա- և հետծրագրային գնահատման մեթոդաբանության միջոցով ծրագրի ներգործության գնահատման համար ԱՄՊ 164 հաստատություններում և դրանց վերադաս բուժհաստատություններում: Մյուս երեք հարցաշարերը նախատեսված են Հայաստանի բնակչության շրջանում տեղի ունեցող փոփոխությունների գնահատման համար՝ կիրառելով նույն նախա- և հետծրագրային գնահատման մեթոդաբանությունը:

Սույն հաշվետվությունն ամփոփում է Արարատի, Արագածոտնի և Արմավիրի մարզերի (3-1 գոտի) ԱՄՊ նպատակային բուժհաստատությունների և բուժաշխատողների կատարողականի ելակետային գնահատումը: Այս գնահատման արդյունքները կարող են կիրառվել ներքին պլանավորման համար: Դրանք նաև համեմատությունների հիմք են հանդիսանում 3-1 գոտու բուժհաստատություններում ծրագրի ազդեցության հետագա գնահատման համար:

Հայաստանի ամերիկյան համալսարանի Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնը (ԱԾՀԶԿ), որը հանդիսանում է ԷՄԳ ենթակապալառուներից մեկը, ստանձնել է ԱՄԲ ծրագրի մոնիտորինգի և գնահատման հիմնական պատասխանատվությունը: Սույն ուսումնասիրության հեղինակներն են Անահիտ Դեմիրճյանը, Ծովինար Հարությունյանը, Վարդուհի Պետրոսյանը և Մայքլ Թոմփսոնը: Հարկ ենք համարում շնորհակալություն հայտնել նաև Հռիփսիմե Մարտիրոսյանին և Նունե Տռուզյանին՝ ուսումնասիրության բոլոր փուլերում իրենց արժեքավոր մասնակցության համար, ինչպես նաև՝ մեր հարցազրուցավարներին (նպատակային մարզերի ԱՄՊ բժիշկներին)՝ տվյալների հավաքագրման գործում իրենց ցուցաբերած ջանքերի համար:

Վստահ ենք, որ այս ուսումնասիրության արդյունքներն արժեքավոր կլինեն ինչպես առավել տեղեկացված որոշումների կայացման միջոցով առողջապահական արդյունքների բարելավման, այնպես էլ՝ նոր ծրագրերի մշակման համար: Սույն հաշվետվությունն առկա է ԱՄԲ ծրագրի կայքում՝ www.phcr.am: Դրա վերաբերյալ մեկնաբանությունները և հարցերը կարող եք ուղարկել info@phcr.am ինտերնետային հասցեով:

Ռիչարդ Ա. Յոդեր
Ծրագրի ղեկավար, ԱՄԲ ծրագիր

Բովանդակություն

| | |
|---|----|
| Նախաբան | ii |
| Հապավումների ցանկ | iv |
| Հապավումների ցանկ | iv |
| 1. Ներածություն | 1 |
| 2. Մեթոդներ | 3 |
| 3. Արդյունքներ..... | 5 |
| 3.1. Բուժօգնության մատչելիություն/տրամադրում | 6 |
| 3.2. Բուժաշխատողի փոխհարաբերությունները այցելուների և բնակչության հետ | 8 |
| 3.3. Միջավայր | 11 |
| 3.4. Բուժհաստատության կառավարում | 13 |
| 3.5. Առաջնային և երկրորդային կանխարգելում | 16 |
| 3.6. Կատարողականի ընդհանուր միավոր | 18 |
| 3.7. ԱԱՊ համակարգի բուժաշխատողների մասնագիտական կարողությունները..... | 20 |
| 3.7.1 Համայնքային բուժքույրեր | 20 |
| 3.7.2 Ամբուլատորիաների, առողջության կենտրոնների և պոլիկլինիկաների բժիշկներ | 25 |
| 3.8. Հիմնական արդյունքներ | 29 |
| Հավելված 1. Բուժհաստատության գործունեության ելակետային գնահատման հարցաթերթիկ | 30 |
| Հավելված 2. Կատարողականի միջին գնահատականը՝ ըստ նպատակային բուժհաստատությունների..... | 40 |

Հապավումների ցանկ

| | |
|--------|---|
| ԱԱՊ | Առողջության առաջնային պահպանում |
| ԱԱՊԲ | Առողջության առաջնային պահպանման բարեփոխումներ |
| ԱԾՅԶԿ | Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոն |
| ԱԿ | Առողջության կենտրոն |
| ԱՄՆՄԶԳ | ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն |
| ԱՆ | Առողջապահության նախարարություն |
| ԲՄԿ | Բուժակ – մանկաբարձական կետ |
| ԲԱ | Բժշկական ամբուլատորիա |
| ԳՄՎ | Գիտելիքներ, մոտեցումներ և վարվելակերպ |
| ԷՄԳ | «Էներջինգ մարքեթս գրուփ» |
| ԷՍԳ | Էլեկտրոնային ազդեցություն |
| ԸԲ | Ընտանեկան բժշկություն |
| ԸԲք | Ընտանեկան բուժքույրություն |
| ՀԱԿ | Համայնքային առողջության կոմիտե |
| ՀԱՀ | Հայաստանի ամերիկյան համալսարան |
| ՀԾՓ | Հիմնական ծառայությունների փաթեթ |
| ՀՍԲԾ | Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագիր |
| ՁԻԱՀ | Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ |
| ՄԳ | Մոնիտորինգ և գնահատում |
| ՄԻԱՎ | Մարդու իմունային անբավարարության վիրուս |
| ՆՕՎԱ | Նորարարություն և օժանդակություն վերարտադրողական առողջությանը (Հայաստան) |
| ՊԿ | Պոլիկլինիկա |
| ՊՀՀՏ | Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն |

1. Ներածություն

1.1 ԱԱՊԲ ծրագրի մասին

Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆՄԶԳ) հնգամյա պայմանագիր է կնքել «Էներջինգ մարքեթս գրուփ» (ԷՄԳ) միջազգային խորհրդատվական ընկերության հետ՝ Հայաստանում Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների (ԱԱՊԲ) ծրագիր իրականացնելու նպատակով: Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել որակյալ առաջնային բուժօգնության ծառայությունների սպառումը բնակչության կողմից՝ Առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակի բուժհաստատությունները և ընտանեկան բժիշկների ու բուժքույրերի կարողությունները զորացնելու, ինչպես նաև՝ առողջական խնդիրների վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բարձրացնելու, բնակչության շրջանում բուժօգնության դիմելու գործելակերպը խրախուսելու և ԱԱՊ ծառայությունների պահանջարկը բարձրացնելու միջոցով: ԱԱՊԲ ծրագրի վեց հիմնական բաղադրիչներն իրականացվում են «ԻնտրաՅելթ ինթերնեյշնլ» կազմակերպության, Հայաստանի ամերիկյան համալսարանի, «Օվերսիզ ստրաթիջիք քնսալթինգ» ընկերության և «Սոշլ սեկտոր դիվելփմենթ ստրաթիջիք» կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում՝ ներառելով հետևյալ միջոցառումները.

- **Բարեփոխումների ընդլայնում.** օգնություն կառավարությանը՝ հետագա բարեփոխումների համար բարենպաստ իրավական դաշտ ստեղծելու հարցում, ԱԱՊ բուժհաստատությունների վերանորոգում և վերազինում, բուժհաստատությունների ղեկավարների համար վերապատրաստման դասընթացների մշակում և կազմակերպում
- **Ընտանեկան բժշկություն.** ժամանակակից ուսուցողական ծրագրերի և նյութերի մշակում շարունակական բժշկական կրթության համար, ընտանեկան բժշկության անկախ խմբային պրակտիկաների հիմնում, ընտանեկան բժիշկների և բուժքույրերի ուսուցում
- **Ազատ հավաքագրում.** ազատ հավաքագրման (բժշկի ազատ ընտրության) կարգի ներդրում Հայաստանի ԱԱՊ համակարգ՝ բուժաշխատողների մրցակցության միջոցով բուժսպասարկման բարելավման նպատակով
- **Բուժօգնության որակ.** բուժօգնության որակի բարձրացում որակի ժամանակակից ստանդարտների և որակի ապահովման գործընթացների ներդրման միջոցով, բուժաշխատողների արտոնագրման և բուժհաստատությունների հավատարմագրման կանոնակարգերի ներդրում
- **Առողջապահության ֆինանսավորում.** առողջապահությանը հատկացվող միջոցների բաշխման թափանցիկության և արդյունավետության բարձրացում ծառայությունների ինքնարժեքի հաշվարկի բարելավման և կատարողականի վրա հիմնված վարձատրության մեխանիզմների միջոցով, բուժհաստատությունների մակարդակում հաշվետվության գործընթացի բարելավում, Առողջապահության ազգային հաշիվների կիրառում
- **Բնակչության ուսուցում.** տրամադրվող ԱԱՊ ծառայությունների վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացում, հասարակության կողմից ազատ հավաքագրման (բժշկի ազատ ընտրության) գործընթացի ըմբռնման և ընտանեկան բժշկության գաղափարի ընկալման ապահովում, առողջ

ապրելակերպի քարոզչություն և բուժօգնության դիմելու գործելակերպի խրախուսում:

Ծրագիրն իրականացվում է գոտիական ընդլայնման սկզբունքով, որը թույլ է տալիս ապահովել բարեփոխումների ընդլայնումը ողջ հանրապետության տարածքում ծրագրի գործունեության ընթացքում: Ծրագրի առաջնահերթ խնդիրն է յուրաքանչյուր գոտու ընտրված բուժհաստատությունների ֆիզիկական պայմանների և բուժօժանայությունների մատուցման բարելավումը: Ծրագրի նշանակետ են հանդիսանում Հայաստանի տարբեր մարզերի մոտ երեք հարյուր բուժհաստատություն: Ծրագրի 3-րդ գոտու նպատակային մարզերը հինգն են՝ Արագածոտնը, Արմավիրը, Արարատը, Վայոց Ձորը և Սյունիքը: Այս մարզերից առաջին երեքը (Արագածոտնը, Արմավիրը և Արարատը) ծրագրի երրորդ տարվա նպատակային մարզերն են և այսուհետև կկոչվեն 3-րդ գոտու առաջին փուլի մարզեր կամ 3-1 գոտի:

Ծրագիրը վերանորոգում, կահավորում և հագեցնում է նպատակային բուժհաստատությունները, նաև վերապատրաստում է դրանց բժշկական և վարչական անձնակազմը ընտանեկան բժշկության, բուժօգնության որակի, կառավարման, ֆինանսավորման, հաշվապահության, հաշվապահական համակարգչային ծրագրի կիրառման, ազատ հավաքագրման և ըստ կատարողականի վարձատրության թեմաներով: Ծրագրի նշանակետ են հանդիսանում նաև ընտրված բուժհաստատությունների կողմից սպասարկվող համայնքները, հատկապես ԱԱՊԲ ծրագրի բնակչության ուսուցման բաղադրիչի առումով, ինչը ենթադրում է այդ համայնքներում Համայնքային առողջության կոմիտեների (ՀԱԿ) հիմնում և նրանց աշխատանքներին օժանդակում, ինչպես նաև՝ փոքր դրամաշնորհային ծրագրերի իրականացում: Սակայն, ընտրված ոչ բոլոր հաստատություններում են թվարկված միջոցառումներն իրականացվում ողջ ծավալով. տարբեր հաստատություններում ներդրվող միջոցառումների համալիրը կարող է տարբեր լինել՝ կախված առկա կարիքներից և գերակայություններից:

1.2 ԱԱՊԲ ծրագրի մոնիտորինգի և գնահատման պլան

Ծրագրի իրականացման մոնիտորինգի և արդյունավետության որոշման նպատակով իրականացվում են հետևյալ գնահատումները.

1) Ելակետային գնահատումներ, այդ թվում.

- Յուրաքանչյուր մարզի նպատակային հաստատությունների նախածրագրային գնահատումներ, որոնք ներառում են. 1) բուժհաստատության կարողությունների գնահատում, որն անդրադառնում է ծրագրի բոլոր բաղադրիչների կառուցվածքային չափորոշիչներին (որոնցից մի քանիսը ծրագրի Կատարողականի կառավարման պլանի չափորոշիչներ են), 2) բուժհաստատության կատարողականի գնահատում, որն անդրադառնում է հաստատության և բուժաշխատողների գործունեությանը և կարող է հիմք հանդիսանալ բուժօգնության որակի փոփոխությունների գնահատման համար,
- Բնակչության հարցումներ, որոնք ներառում են. 1) սպասարկվողների գոհունակության հարցում, 2) սպասարկվողների գիտելիքների, մոտեցումների և վարվելակերպի (ԳՄԿ) հարցում ԱԱՊԲ ծրագրի կողմից հիմնված Համայնքային առողջության կոմիտեների միջոցով իրականացվող առողջապահական կրթության թեմաների շուրջ, 3) հանրապետության ողջ տարածքում իրականացվող ընտանիքների առողջապահական հարցում,

որը վերաբերում է հարցվողների կողմից սեփական առողջական վիճակի գնահատմանը, նրանց առողջական վիճակի փոփոխություններին, վաղ ախտորոշիչ և կանխարգելիչ ծառայություններից օգտվելու նրանց գործելակերպին, բուժօգնության հասանելիությանը և հարցվողների կողմից այդ օգնության որակի ընկալմանը, ԱԱՊԲ ծրագրի կողմից իրականացվող միջոցառումներին նրանց ներգրավվածության աստիճանին և դրանց նկատմամբ ունեցած մոտեցումներին:

2) Միջանկյալ և վերջնական գնահատումներ, այդ թվում.

- Յուրաքանչյուր մարզի նպատակային բուժհաստատություններում ծրագրի աշխատանքների ավարտից հետո կրկնակի անգամ կատարվում են վերոհիշյալ բոլոր գնահատումները:
- Նպատակային մարզերում ծրագրի միջոցառումների ավարտից հետո կրկին անցկացվում են բնակչության հարցումներ (ԳՄՎ և սպասարկվողների բավարարվածության), նախատեսվում է նաև ծրագրի ավարտին կրկնել ընտանիքների առողջապահական հարցումը հանրապետության ողջ տարածքում:

Սույն հաշվետվությունն ամփոփում է ԱԱՊԲ ծրագրի երրորդ տարվա նպատակային մարզերի (Արագածոտն, Արմավիր, Արարատ) ընտրված ԱԱՊ բուժհաստատությունների և դրանց բուժաշխատողների կատարողականի ելակետային գնահատման արդյունքները: Այս հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ներքին պլանավորման համար, իսկ հետագայում՝ հիմք հանդիսանալ 3-1 գոտում ԱԱՊԲ ծրագրի ազդեցության գնահատման համար:

2. Մեթոդներ

ԱԱՊԲ ծրագրի և համապատասխան մարզերի առողջապահական վարչությունների աշխատակիցները համատեղ ընտրել են 3-1 գոտու նպատակային բուժհաստատությունները Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզերում, որտեղ ծրագրի միջոցառումներն իրականացվում են 2008-2010 թթ. ընթացքում: Ընտրված բուժհաստատություններում ԱԱՊԲ ծրագրի մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) թիմը երկու տեսակի գնահատում է իրականացրել՝ ա) հաստատությունների նյութական և մարդկային կարողությունների (ռեսուրսների) և բ) հաստատությունների ու բուժաշխատողների կատարողականի:

Հաստատությունների կատարողականի գնահատման հարցաշարը (հավելված 1) մշակվել է ՆՕՎԱ ծրագրի կողմից բուժհաստատությունների մակարդակում որակի բարելավման ռազմավարության շրջանակներում կիրառված բուժհաստատությունների ինքնագնահատման հարցաշարի, ինչպես նաև՝ Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագրի (ՀՄԲԾ) կողմից իր փորձարարական հաստատություններում կիրառված բուժհաստատությունների կազմակերպման/կառավարման ինքնագնահատման հարցաշարի հիման վրա: ՄԳ թիմը դրանցում ներմուծել է անհրաժեշտ փոփոխություններ այնպես, որ ստացված հարցաշարը համապատասխանի ԱՄՆ ՄԶԳ և ԱԱՊԲ ծրագրի ներկայիս գերակայություններին:

Բուժհաստատությունների և բուժաշխատողների կատարողականի գնահատման հարցաշարը կազմված է հետևյալ հիմնական բաժիններից.

- Բուժօգնության մատչելիություն/տրամադրում
- Բուժաշխատողների փոխհարաբերություններ սպասարկվողների հետ
- Միջավայր
- Կառավարում
- Առաջնային և երկրորդային կանխարգելում
- Բուժաշխատողների հմտություններ/կատարողական:

ՄԳ թիմը հիմնական հարցաթերթիկից առանձնացրել է բուժաշխատողների կլինիկական հմտությունները/կատարողականը գնահատող լրացուցիչ հարցեր՝ մշակված ԱԱՊԲ ծրագրի Ընտանեկան բժշկության թիմի հետ համատեղ: Եթե հիմնական հարցաշարը լրացվել է բուժաստատության ղեկավարի կամ պատասխանատուի հետ հարցազրույցի միջոցով, ապա այս լրացուցիչ հարցերին պատասխանել են իրենք՝ բուժաշխատողները, դեմ առ դեմ հարցազրույցի ընթացքում: Բուժաշխատողների կատարողականի գնահատումը ներառել է նաև դիտարկման երկու ստուգաթերթիկ, որոնց միջոցով գնահատվել է ԲՄԿ բուժքույրերի կողմից զարկերակային ճնշման և արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափումների կատարման համապատասխանությունը ընդունված ընթացակարգերին:

Բուժաստատությունների կարողությունների, ինչպես նաև՝ բուժաստատությունների և բուժաշխատողների կատարողականի գնահատումներն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր նպատակային մարզում ՄԳ թիմը պատրաստել է երկուական հարցազրուցավարի (բոլորը եղել են տեղի բժիշկներ): Երկօրյա կրթական դասընթացը ներառել է տեսական և գործնական պարապմունքներ հարցման իրականացման, ինչպես նաև՝ ընտրված բժշկական միջամտությունների՝ զարկերակային ճնշման և արյան մեջ գլյուկոզայի մակարդակի չափման, ստանդարտացված դիտարկումների վերաբերյալ:

Յուրաքանչյուր մարզում տեղացի վարորդներ են վարձվել՝ հարցազրուցավարներին համապատասխան բուժաստատություններ տանելու համար: Հարցումները տևել են մոտավորապես վեց շաբաթ (սկսվելով 2008 թ. ապրիլի կեսերից): ՄԳ թիմը իրականացրել է հարցման գործընթացի պարբերական ստուգումներ բոլոր երեք մարզերում՝ հետազոտության ընթացակարգին գործընթացի համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Առողջապահական ծառայությունների հետազոտման և զարգացման կենտրոնի (ԱԾՀԶԿ) տվյալներ մուտքագրող թիմը, ՄԳ թիմից ստանալով համապատասխան ուսուցում, մուտքագրել է տվյալները համակարգչային տվյալների բազա՝ օգտագործելով SPSS 11.0 վիճակագրական փաթեթը: Տվյալների կրկնակի մուտքագրումը և վերջնական մաքրումը ապահովել են մուտքագրված տեղեկությունների ճշգրտությունը:

Բուժաստատության/բուժաշխատողի կատարողականի գնահատման հարցաշարի յուրաքանչյուր բաժնի համար ՄԳ թիմը հաշվարկել է գումարային միավոր, որը ներառում է տվյալ բաժնի բոլոր հարցերի պատասխանները: Առավելագույն՝ «3», միավոր տրվել է «այո» պատասխանին, իսկ «ոչ» պատասխանին տրվել է «0» միավոր: Պատասխանների Լայքերթի տիպի սանդղակի դեպքում դարձյալ յուրաքանչյուր պատասխան ստացել է 0-3 միավոր՝ հետևյալ միջանկյալ միավորներով՝ 1, 1.5 և 2: Յուրաքանչյուր բաժնի գումարային միավորի հիման վրա հաշվարկվել է միջին միավոր, որի առավելագույն հնարավոր արժեքը 3.0-ն է: Միջին միավորները համեմատվել են անկախ ընտրանքի t-թեստի և միակողմանի ANOVA թեստի միջոցով:

3. Արդյունքներ

Կատարողականի գնահատման հետազոտության մեջ ընդգրկվել են 81 բուժհաստատություն, որոնցից 32-ը՝ Արագածոտնի, 26-ը՝ Արարատի, 23-ը՝ Արմավիրի մարզում (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. ԱԱՊԲ ծրագրի նպատակային բուժհաստատությունները 3-1 գոտում

| Վերանորոգման ենթակա բուժ-հաստատություններ | Վերադաս բուժ-հաստատություններ | Վերանորոգման ենթակա բուժ-հաստատություններ | Վերադաս բուժ-հաստատություններ |
|---|-------------------------------|---|-------------------------------|
| Արագածոտնի մարզ | | Արարատի մարզ | |
| Ապարանի շրջան | | | |
| 1. Լուսազյուղի ԲՄԿ [#] | 25.Արագածի ԱԿ | 1. Լուսաշողի ԲՄԿ | 15.Ջանգակատան ԲԱ |
| 2. Մուլքի ԲՄԿ [#] | | 2. Այգեպատի ԲՄԿ | 16. Այգեստանի ԲԱ |
| 3. Նիգավանի ԲՄԿ [#] | | 3. Բասրամյանի ԲՄԿ | 17. Ազատավանի ԲԱ |
| 4. Ծաղկաշենի ԲՄԿ | | 4. Մասիսի ԲՄԿ | 18. Բուրաստանի ԲԱ |
| 5. Վարդենուտի ԲՄԿ | | 5. Բերքանուշի ԲՄԿ* | 19. Դալարի ԲԱ |
| 6. Ափնագյուղի ԲՄԿ | | 6. Արաքսավանի ԲՄԿ | 20. Դիմիտրովի ԲԱ |
| 7. Հարթավանի ԲՄԿ | | 7. Մրգանուշի ԲՄԿ | 21. Գետազատի ԲԱ |
| Արագածի շրջան | | 8. Դիտակի ԲՄԿ | 22. Ջրաշենի ԲԱ |
| 8. Ալագյազի ԲՄԿ | 26.Շենավանի ԲԱ | 9. Հեղտաշենի ԲՄԿ | 23. Մխչյանի ԲԱ |
| 9. Բերքառատի ԲՄԿ | | 10. Մրգավետի ԲՄԿ | |
| 10. Գեղարոտի ԲՄԿ | | 11. Հնաբերդի ԲՄԿ | 24. Վ.Արտաշատի ԲԱ |
| 11. Գեղածորի ԲՄԿ | | 12.Նարեկի ԲՄԿ* | 25. Քաղցրաշենի ԲԱ |
| 12.Վարդաբլուրի ԲՄԿ | | 13. Նոր Կյուրիների ԲՄԿ | 26. Մարմարաշենի ԲԱ |
| 13. Ծաղկահովտի ԲՄԿ | | 14. Վերին Դվինի ԲԱ | |
| 14.Մելիքգյուղի ԲՄԿ | | Արմավիրի մարզ | |
| 15. Նորաշենի ԲՄԿ | | 1. Նորավանի ԲՄԿ [#] | 14. Գետաշենի ԲԱ |
| 16. Ծիլքարի ԲՄԿ | | 2. Բերքաշատի ԲՄԿ | 15. Քարակերտի ԲԱ |
| 17. Լեռնապարի ԲՄԿ * | | 3. Արգինայի ԲՄԿ | 16. Բաղրամյանի ԲԱ |
| Աշտարակի շրջան | | 4. Շենիկի ԲՄԿ | 17.Երվանդաշատի ԱԿ |
| 18. Նոր Ամանոսի ԲՄԿ | 5. Վանանդի ԲՄԿ* | 6. Ծաղկալանջի ԲՄԿ | 18.Արագածի ԲԱ |
| 19. Ավանի ԲՄԿ | 27. Արուճի ԲԱ | 7. Այգեկի ԲՄԿ | 19. Մերձավանի ԲԱ |
| 20. Ղազարավանի ԲՄԿ | 28.Կոշի ԲԱ | 8. Արևշատի ԲՄԿ | 20. Մուսալեռի ԲԱ |
| 21. Նոր Եղեսիայի ԲՄԿ | 29. Փարպիի ԲԱ | 9. Հեվտամեջի ԲՄԿ | 21. Սամաղարի ԲԱ |
| 22. Ոսկեհատի ԲՄԿ | 30. Ուջանի ԲԱ | 10. Ծաղկունքի ԲՄԿ | 22. Շահունյանի ԲԱ |
| Թալինի շրջան | | 11. Այգեշատի/Էջ. ԲՄԿ | 23. Գայի ԲԱ |
| 23.Ցամաքասարի ԲՄԿ [#] | 32.Ն.Բազմաբերդի ԲԱ | 12. Հայկաշենի ԲՄԿ* | |
| 24.Վ.Բազմաբերդի ԲՄԿ | | 13. Մեծամորի ԲՄԿ* | |

* Այս հաստատությունները կստանան սարքավորումներ և կահույք, սակայն չեն վերանորոգվի:

* *Ընտրվել է նաև որպես վերանորոգման հաստատություն:

Այս բուժհաստատությունների վերադաս հաստատությունները (Ապարանի, Թալինի և Արմավիրի ՊԿ-ները) չեն ընդգրկվել ելակետային հետազոտության մեջ, քանի որ նրանք Առողջապահության նախարարության օպտիմիզացման ծրագրի համաձայն միացել են շրջանային հիվանդանոցների հետ:

3.1. Բուժօգնության մատչելիություն/տրամադրում

Ուսումնասիրվել է մի շարք ծառայությունների տրամադրումը գնահատվող բուժհաստատությունում: Պարզվել է, որ բուժհաստատությունների միայն 60.5%-ն է պաշտոնապես սահմանված ժամերին մշտապես բաց և մատչելի այցելուների համար, 30.9%-ը բաց և մատչելի է սովորաբար, 3.7%-ը՝ երբեմն, իսկ չորս բուժհաստատություն (4.9%)՝ երբեք: Բուժհաստատությունների 66.7%-ի կողմից սպասարկվող բնակչությունը տեղյակ է հիմնական ծառայությունների փաթեթի (ՀԾՓ) շրջանակներում անվճար մատուցվող ծառայություններին: Անվճար ծառայությունները պարզաբանող նյութեր եղել են բուժհաստատությունների 56.8%-ում, ՀՀ ԱՆ պետպատվերի տեղեկատու պաստառներն այցելուների համար տեսանելի են եղել բուժհաստատությունների 55.6%-ում: Աշխատանքային ժամերը փակցված են եղել բուժհաստատությունների միայն 35.0%-ում: Գնահատված բուժհաստատությունների 7.4%-ի այցելուների համար աշխատանքային ժամերը հարմար չեն եղել: Ոչ աշխատանքային ժամերին անհետաձգելի իրավիճակներին արձագանքման ցուցումները փակցված են եղել միայն երկու հաստատությունում: Գրեթե բոլոր բուժհաստատություններում (97.5%) նշել են, որ բուժանձնակազմը կատարում է նախա- և հետծննդյան տնային այցեր: Աղյուսակ 2-ը ցույց է տալիս պատասխանների բաշխումն ըստ բուժհաստատության տեսակի:

Աղյուսակ 2. Բուժօգնության մատչելիությունը/տրամադրումը տարբեր տեսակի բուժհաստատություններում

| | ԲՄԿ % (n) | Վերադաս հաստատություններ | | | ԸՆԴԱ- ՄԵՆԸ % (n) |
|---|--------------|--------------------------|-------------|-------------------|------------------------|
| | | ԲԱ % (n) | ԱԿ % (n) | Ընդամենը % (n) | |
| Հաստատությունը բաց է և մատչելի պաշտոնապես սահմանված ժամերին | | | | | |
| Միշտ | 38.3 (18) | 93.3 (28) | 75.0 (3) | 91.2 (31) | 60.5 (49) |
| Սովորաբար | 48.9 (23) | 3.3 (1) | 25.0 (1) | 5.9 (2) | 30.9 (25) |
| Երբեմն | 6.4 (3) | - | - | - | 3.7 (3) |
| Երբեք | 6.4 (3) | 3.3 (1) | - | 2.9 (1) | 4.9 (4) |
| Բնակչությունը տեղյակ է մատուցվող անվճար ծառայությունների մասին | | | | | |
| Այո, բոլորը | 72.3 (34) | 53.3 (16) | 100.0 (4) | 58.8 (20) | 66.7 (54) |
| Այո, մեծ մասը | 27.7 (13) | 43.3 (13) | - | 38.2 (13) | 32.1 (26) |
| Ոչ | | 3.3 (1) | - | 2.9 (1) | 1.2 (1) |
| Աշխատանքային ժամերը փակցված են բուժհաստատությունում | | | | | |
| Այո | 17.0 (8) | 60.0 (18) | 66.7 (2) | 60.6 (20) | 35.0 (28) |
| Ոչ | 83.0 (39) | 40.0 (12) | 33.3 (1) | 39.4 (13) | 65.0 (52) |
| Աշխատանքային ժամերը հարմար են այցելուների համար | | | | | |
| Այո | 89.4 (42) | 96.7 (29) | 100.0 (4) | 97.1 (33) | 92.6 (75) |
| Ոչ | 10.6 (5) | 3.3 (1) | - | 2.9 (1) | 7.4 (6) |
| Հաստատությունում կան անվճար ծառայությունները պարզաբանող նյութեր | | | | | |
| Այո | 34.0 (16) | 86.7 (26) | 100.0 (4) | 88.2 (30) | 56.8 (46) |
| Ոչ | 66.0 (31) | 13.3 (4) | - | 11.8 (4) | 43.2 (35) |
| ԱՆ պետպատվերի տեղեկատու ցուցանակները տեսանելի են այցելուներին | | | | | |
| Այո | 31.9 (15) | 86.7 (26) | 100.0 (4) | 88.2 (30) | 55.6 (45) |
| Ոչ | 68.1 (32) | 13.3 (4) | - | 11.8 (4) | 44.4 (36) |
| Բուժաշխատողները սովորաբար կատարում են նախա/հետծննդյան տնային այցեր | | | | | |
| Այո | 97.9 (46) | 96.7 (29) | 100.0 (4) | 97.1 (33) | 97.5 (79) |
| Ոչ | 2.1 (1) | 3.3 (1) | - | 2.9 (1) | 2.5 (2) |
| Դռանը ցուցանակ է փակցված, թե ոչ աշխատանքային ժամերին որտեղ դիմել անհետաձգելի բուժօգնության համար | | | | | |
| Այո | - | 3.3 (1) | 25.0 (1) | 5.9 (2) | 2.5 (2) |
| Ոչ | 100.0 (47) | 96.7 (29) | 75.0 (3) | 94.1 (32) | 97.5 (79) |

Բուժօգնության մատչելիություն/տրամադրում. ԲՄԿ-երին բնորոշ հարցեր. ԲՄԿ-երում հարցվողները պատասխանել են մի քանի լրացուցիչ հարցերի բուժօգնության մատչելիության և ծառայությունների տրամադրման վերաբերյալ (աղյուսակ 3): Գրեթե բոլոր ԲՄԿ-երը (91.5%) նշել են, որ վերահսկող բժիշկն այցելում է իրենց առնվազն ամիսը մեկ անգամ: ԲՄԿ-երի 87.2%-ը նշել է, որ վերահսկող բժիշկը տնային այցեր է կատարում առնվազն ամիսը մեկ անգամ: 66.0%-ը՝ որ վերահսկող բժիշկը միշտ ժամանակ է տրամադրում ԲՄԿ-ում հիվանդների ընդունելության համար: ԲՄԿ-երի 66.0%-ին վերահսկող բժիշկը միշտ նախօրոք տեղյակ է պահում իր այցելության ամսաթվի և ժամի մասին: Գյուղապետների մեծ մասը (68.1%) միայն երեք ամիսը մեկ անգամ կամ ավելի հազվադեպ է փոխադրամիջոց տրամադրում ԲՄԿ-երին՝ անհետաձգելի դեպքերում:

Աղյուսակ 3. Ծառայությունների մատչելիության/տրամադրման մանրամասներ ԲՄԿ-երում

| | Առնվազն ամիսը մեկ % (n) | Երկու ամիսը մեկ % (n) | Երեք ամիսը մեկ % (n) | Ավելի սակավ % (n) |
|---|-------------------------------|-----------------------------|----------------------------|-------------------------|
| Վերահսկող բժշկի այցելության հաճախականությունը | 91.5 (43) | 4.3 (2) | - | 4.3 (2) |
| Վերահսկող բժշկի տնային այցեր կատարելու հաճախականությունը | 87.2 (41) | 6.4 (3) | 2.1 (1) | 4.3 (2) |
| | Միշտ | Սովորա- բար | Երբեմն | Երբեք |
| Բուժհաստատությունում հիվանդներին ընդունելու համար բժշկի ժամանակ տրամադրելու հաճախականությունը | 66.0 (31) | 25.5 (12) | 6.4 (3) | 2.1 (1) |
| ԲՄԿ իր այցի ամսաթվի և ժամի մասին բժշկի նախազգուշացման հաճախականությունը | 66.0 (31) | 29.8 (14) | 4.3 (2) | - |
| Անհետաձգելի դեպքերում համայնքին գյուղապետի կողմից փոխադրամիջոցի տրամադրման հաճախականությունը | 8.5 (4) | 23.4 (11) | 25.5 (12) | 42.6 (20) |

Բուժօգնության մատչելիության միավորները հաշվարկվել են գլուխ 2-ում նկարագրված եղանակով: Աղյուսակ 4-ը ներկայացնում է մատչելիության միջին միավորների բաշխումը՝ ըստ բուժհաստատության տեսակի և մարզի: Բոլոր բուժհաստատությունների համար միջին միավորը կազմել է 2.1 (առավելագույն 3.0 միավորից): Բուժհաստատությունների մյուս տեսակների համեմատությամբ, առողջության կենտրոնների միջին միավորն ամենաբարձրն է եղել (2.6), իսկ ԲՄԿ-երինը՝ ամենացածրը (1.9): Ընդհանուր առմամբ, վերադաս հաստատությունների միավորները հավաստիորեն ավելի բարձր են եղել, քան՝ ԲՄԿ-երինը: Տարբեր մարզերի բուժհաստատությունների միջին միավորները հավաստիորեն չեն տարբերվել:

Աղյուսակ 4. Մատչելիության միջին միավորը՝ ըստ բուժհաստատության տեսակի և մարզի

| | Մատչելիության միավոր, միջին (n) |
|----------------------------------|---------------------------------|
| Բուժհաստատության տեսակը * | |
| ԲՄԿ | 1.9 (47) |
| Վերադաս հաստատություններ (ԲԱ/ԱԿ) | 2.3 (33) |
| ԲԱ | 2.3 (30) |
| ԱԿ | 2.6 (3) |
| Մարզը | |
| Արարատ | 2.1 (26) |
| Արմավիր | 2.3 (22) |
| Արագածոտն | 2.0 (32) |
| Ընդամենը | 2.1 (80) |

* տարբերությունը վիճակագրորեն հավաստի է, $p^{\dagger} < 0.05$

3.2. Բուժաշխատողի փոխհարաբերությունները այցելուների և բնակչության հետ

Հետազոտությունը ցույց է տալիս, որ բուժհաստատությունների 34.6%-ում (15 ԲՄԿ-ում, 12 ԲԱ-ում և միայն 1 ԱԿ-ում) այցելուներին միշտ կամ սովորաբար տրամադրել են անհրաժեշտ առողջապահական կրթական նյութեր (աղյուսակ 5): Միայն քիչ թվով բուժհաստատություններում է (հինգ ԲՄԿ-ում և մեկ ԲԱ-ում), որ այցելուներին երբեք չեն տրամադրել կրթական նյութեր: Հաստատությունների մեծ մասում բուժաշխատողներն այցելուների հետ միշտ կամ սովորաբար վարել են առողջապահական գրույցներ (բուժհաստատությունների 81.0%-ում՝ 33 ԲՄԿ-ում, 27 ԲԱ-ում և 4 ԱԿ-ում):

Սակավաթիվ (13) բուժհաստատություններ են կանոնավորապես (առնվազն ամիսը մեկ անգամ) վարել առողջապահական գրույցներ համայնքի հետ, իսկ հաստատությունների մեծ մասն (ԲՄԿ-երի 44.7%-ը, ԲԱ-ների 30.0%-ը և ԱԿ-ների 50.0%-ը) այդպիսի գրույցներ վարել է հազվադեպ: Այն հաստատություններում, որտեղ անց են կացվել առողջապահական գրույցներ համայնքի համար, բուժաշխատողների մեծ մասը (82.7%) հազվադեպ է նախապատրաստվել այդ գրույցներին՝ ինչպես հարկն է (օր.՝ չեն տեղեկացրել համայնքին, չեն նախապատրաստել գրույցի օրակարգը, չեն նախապատրաստել տարածքը): Ըստ պատասխանողների՝ գյուղապետերը հազվադեպ են մասնակցել համայնքի առողջապահական խնդիրների լուծմանը. բուժհաստատությունների ավելի քան երկու երրորդը նշել է, որ գյուղապետերը հազվադեպ են մասնակցել կամ երբեք չեն մասնակցել այդ խնդիրների լուծմանը:

† *P-արժեքը* վիճակագրական հավաստիության չափման միավոր է: P-արժեքը ներկայացնում է հետազոտված խմբերի միջև գոյություն ունեցող տարբերության պատահական լինելու հավանականությունը: Որպես օրինակ կարող է ծառայել նորածին երեխաների միջին ծնված քաշի տարբերությունները երկու տարբեր եկամուտ ունեցող խմբերի միջև: Ցածր P-արժեքը, արդյունքի ցանկացած տարբերության համար ցույց է տալիս թե որքան ցածր է հավանականությունը, որ այդ տարբերությունը պատահականության հետևանք է: P-արժեքի ցածր ցուցանիշով արդյունքները համարվում են վիճակագրորեն հավաստի: Օրինակ՝ P-արժեքը 0,01 ($p = 0,01$) նշանակում է, որ ստացված արդյունքների պատահական լինելու հավանականությունը 100-ից 1 է: Նմանատիպ հետազոտություններում ցանկալի է, որ P-արժեքը լինի 0,05 կամ ավելի ցածր:

Ըստ պատասխանողների, ԲՄԿ-երի 17.0%-ում և ԲԱ-ների 46.7%-ում այցելուները միշտ հնարավորություն են ունեցել ընտրություն կատարելու բուժման տարբեր մեթոդների միջև: Միայն չորս բուժհաստատություն (բոլորը՝ ԲԱ) են ունեցել սպասարկվողների առաջարկությունների համար նախատեսված արկղիկ: Բուժհաստատությունների 93.7%-ում նախորդ երեք ամսվա ընթացքում ոչինչ չի փոխվել այցելուների առաջարկությունների հիման վրա: Գրեթե բոլոր բուժհաստատություններում (93.8%) բուժաշխատողները հայտնել են, որ կողմնակի անձինք չեն կարող տեղեկություններ ստանալ սպասարկվողների քարտերից: Միայն 26 բուժհաստատություն (32.5%) են ունեցել խորհրդատվության, զննումների և միջամտությունների համար նախատեսված առանձին սենյակ, որտեղ կատարվածը չի կարող տեսանելի կամ լսելի լինել այլոց համար: Ոչ մի բուժհաստատությունում կանոնավոր կերպով չեն կատարվել բուժօգնությունից սպասարկվողների բավարարվածության հարցումներ:

ԲՄԿ-երի 10.6%-ում, ԲԱ-ների 48.3%-ում և բոլոր ԱԿ-ներում վարվել են գրանցումներ սպասարկվող բնակչության տարիքային և սեռային կազմի վերաբերյալ: 8 ԲՄԿ-ում, 21 ԲԱ-ում և 2 ԱԿ-ում բուժաշխատողներն ունեցել են իրենց համայնքի հատուկ արտոնություններ և անվճար դեղորայք ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակները:

Աղյուսակ 6-ը ցույց է տալիս բուժաշխատող-սպասարկվող փոխհարաբերությունների միջին միավորների բաշխումն ըստ հաստատության տեսակի և մարզի: Ընդհանուր միջին միավորը կազմել է 0.9՝ հնարավոր 3.0-ից: ամենաբարձր միավորն (1.3) ունեցել են ԲԱ-ները, ապա՝ ԱԿ-ները (1.2) և վերջում՝ ԲՄԿ-երը (0.7): ԲՄԿ-երի միավորը եղել է հավաստիորեն ավելի ցածր, քան վերադաս բուժհաստատություններինը: Միավորները հավաստիորեն չեն տարբերվել ըստ մարզերի:

Աղյուսակ 5. Բուժաշխատողների փոխհարաբերությունները այցելուների և բնակչության հետ

| | ԲՄԿ % (n) | Վերադաս հաստատություններ | | | ԸՆԴԱՄԵՆԸ % (n) |
|--|--------------|--------------------------|-------------|-------------|-------------------|
| | | ԲԱ % (n) | ԱԿ % (n) | ՊԿ % (n) | |
| Բուժաշխատողների կողմից այցելուներին անհրաժեշտ առողջապահական նյութեր տրամադրելու հաճախականությունը | | | | | |
| Միշտ | 6.4 (3) | 20.0 (6) | - | 17.6 (6) | 11.1 (9) |
| Սովորաբար | 25.5 (12) | 20.0 (6) | 25.0 (1) | 20.6 (7) | 23.5 (19) |
| Երբեմն | 57.4 (27) | 56.7 (17) | 75.0 (3) | 58.8 (20) | 58.0 (47) |
| Երբեք | 10.6 (5) | 3.3 (1) | - | 2.9 (1) | 7.4 (6) |
| Բուժաշխատողների կողմից այցելուների այցի ժամանակ նրանց հետ առողջապահական գրույցներ վարելու հաճախականությունը | | | | | |
| Միշտ | 17.8 (8) | 36.7 (11) | 25.0 (1) | 35.3 (12) | 25.3 (20) |
| Սովորաբար | 55.6 (25) | 53.3 (16) | 75.0 (3) | 55.9 (19) | 55.7 (44) |
| Երբեմն | 26.7 (12) | 10.0 (3) | - | 8.8 (3) | 19.0 (15) |
| Բուժաշխատողների կողմից համայնքի հետ առողջապահական գրույցներ վարելու հաճախականությունը | | | | | |
| Առնվազն ամիսը մեկ | 10.6 (5) | 23.3 (7) | 25.0 (1) | 23.5 (8) | 16.0 (13) |
| 2-3 ամիսը մեկ | 21.3 (10) | 20.0 (6) | | 17.6 (6) | 19.8 (16) |
| Տարին մեկ-երկու | 23.4 (11) | 26.7 (8) | 25.0 (1) | 26.5 (9) | 24.7 (20) |
| Ավելի քիչ | 44.7 (21) | 30.0 (9) | 50.0 (2) | 32.4 (11) | 39.5 (32) |

3-1 գոտու նպատակային բուժհաստատությունների կատարողականի ելակետային գնահատում

| | ԲՄԿ % (n) | Վերադաս հաստատություններ | | | ԸՆԴԱՄԵՆԸ % (n) |
|---|--------------|--------------------------|-------------|-------------|-------------------|
| | | ԲԱ % (n) | ԱԿ % (n) | ՊԿ % (n) | |
| Բուժախսատողների կողմից առողջապահական գրույցներին՝ ինչպես հարկն է նախապատրաստվելու հաճախականությունը | | | | | |
| Միշտ | - | 3.3 (1) | | 2.9 (1) | 100.0 (1) |
| Սովորաբար | 6.4 (3) | 30.0 (9) | 25.0 (1) | 29.4 (10) | 16.0 (13) |
| Երբեմն | 29.8 (14) | 36.7 (11) | 25.0 (1) | 35.3 (12) | 32.1 (26) |
| Երբեք | 63.8 (30) | 30.0 (9) | 50.0 (2) | 32.4 (11) | 50.6 (41) |
| Համայնքի առողջապահական խնդիրների լուծմանը գյուղապետի (համայնքապետի) մասնակցության հաճախականությունը | | | | | |
| Միշտ | 12.8 (6) | 13.3 (4) | - | 11.8 (4) | 12.3 (10) |
| Սովորաբար | 12.8 (6) | 16.7 (5) | 25.0 (1) | 17.6 (6) | 14.8 (12) |
| Երբեմն | 59.6 (28) | 66.7 (20) | 75.0 (3) | 67.6 (23) | 63.0 (51) |
| Երբեք | 14.9 (7) | 3.3 (1) | - | 2.9 (1) | 9.9 (8) |
| Բուժման տարբեր մեթոդների միջև հիվանդներին ընձեռնվող ընտրություն կատարելու հնարավորության հաճախականությունը | | | | | |
| Միշտ | 17.0 (8) | 46.7 (14) | - | 41.2 (14) | 27.2 (22) |
| Սովորաբար | 21.3 (10) | 33.3 (10) | 50.0 (2) | 35.3 (12) | 27.2 (22) |
| Երբեմն | 46.8 (22) | 16.7 (5) | 25.0 (1) | 17.6 (6) | 34.6 (28) |
| Երբեք | 14.9 (7) | 3.3 (1) | 25.0 (1) | 5.9 (2) | 11.1 (9) |
| Բուժհաստատությունում առաջարկությունների արկղիկի առկայությունը | | | | | |
| Այո | - | 13.8 (4) | - | 12.1 (4) | 5.0 (4) |
| Ոչ | 100.0 (47) | 86.2 (25) | 100.0 (4) | 87.9 (29) | 95.0 (76) |
| Այցելուների առաջարկների հիման վրա հաստատությունում վերջին երեք ամսվա ընթացքում կատարված փոփոխությունները | | | | | |
| Այո | 4.3 (2) | 7.1 (2) | 25.0 (1) | 9.4 (3) | 6.3 (5) |
| Ոչ | 95.7 (45) | 92.9 (26) | 75.0 (3) | 90.6 (29) | 93.7 (74) |
| Հիվանդների քարտերի ապահովությունը/գաղտնիությունը | | | | | |
| Այո | 6.4 (3) | 6.9 (2) | - | 6.1 (2) | 6.3 (5) |
| Ոչ | 93.6 (44) | 93.1 (27) | 100.0 (4) | 93.9 (31) | 93.8 (75) |
| Բուժհաստատությունում առանձին սենյակի առկայությունը խորհրդատվության, գնումների և միջամտությունների համար | | | | | |
| Այո | 6.4 (3) | 65.5 (19) | 100.0 (4) | 69.7 (23) | 32.5 (26) |
| Ոչ | 93.6 (44) | 34.5 (10) | - | 30.3 (10) | 67.5 (54) |
| Բուժաշխատողները վարում են գրանցումներ սպասարկվող բնակչության տարիքային և սեռային կազմի վերաբերյալ | | | | | |
| Այո | 10.6 (5) | 48.3 (14) | 100.0 (4) | 54.5 (18) | 28.8 (23) |
| Ոչ | 89.4 (42) | 51.7 (15) | - | 45.5 (15) | 71.3 (57) |
| Բուժաշխատողները պահում են իրենց համայնքի հատուկ արտոնություններ ունեցող անձանց ցուցակները | | | | | |
| Այո | 17.0 (8) | 72.4 (21) | 50.0 (2) | 69.7 (23) | 38.8 (31) |
| Ոչ | 83.0 (39) | 27.6 (8) | 50.0 (2) | 30.3 (10) | 61.3 (49) |
| Հաստատությունում պարբերաբար կատարվում են հիվանդների գոհունակության հարցումներ | | | | | |
| Այո | - | - | - | - | - |
| Ոչ | 100.0 (47) | 100.0 (29) | 100.0 (4) | 100.0 (33) | 100.0 (80) |

Աղյուսակ 6. Այցելուների և բնակչության հետ բուժաշխատողների փոխհարաբերությունների միավորը՝ ըստ բուժհաստատության տեսակի և մարզի

| Բուժաշխատողի փոխհարաբերությունների միավորը՝ միջին (n) | |
|--|-----------------|
| Բուժհաստատության տեսակը* | |
| ԲՄԿ | 0.7 (45) |
| Վերադաս հաստատություններ (ԲԱ/ԱԿ) | 1.3 (32) |
| ԲԱ | 1.3 (28) |
| ԱԿ | 1.2 (4) |
| Մարզ | |
| Արարատ | 1.0 (26) |
| Արմավիր | 0.9 (21) |
| Արագածոտն | 0.9 (30) |
| Ընդամենը | 0.9 (77) |

* տարբերությունը վիճակագրորեն հավաստի է, $p < .05$

3.3. Միջավայր

Ինչպես երևում է աղյուսակ 7-ից, գնահատված բուժհաստատությունների միայն 40.7%-ում են բուժաշխատողներն ունեցել պատվաստումների «սառցե շղթայի» պահպանման վերաբերյալ լիարժեք գրանցումներ: Միայն երեք ԲՄԿ-ում են վարվել այսպիսի գրանցումներ, մինչդեռ ամբուլատորիաների (90.0%) և առողջության կենտրոնների (75.0%) մեծ մասը վարել են այդ գրանցումները: Ինչևէ, այս տվյալը պետք է զգուշությամբ մեկնաբանվի, քանի որ, ըստ մի քանի բուժքույրերի, «սառցե շղթայի» պահպանման վերաբերյալ գրանցումների վարման պատասխանատվությունը կրում է վերադաս բուժհաստատությունը. ԲՄԿ-երի բուժքույրերը միայն «փոխարինաբար» վերցնում են պատվաստանյութերով սառցապայուսակը և որոշակի (կարճ) ժամանակ անց վերադարձնում այն ամբուլատորիա/պոլիկլինիկա:

Ոչ մի ԲՄԿ-ում չեն նշել, որ իրենց բուժհաստատության աշխատանքային պայմանները բավարար են, մինչդեռ ամբուլատորիաների 56.7%-ի և առողջության կենտրոնների 25.0%-ի ղեկավարները բավարար են համարել աշխատանքային պայմաններն իրենց հաստատությունում: Ըստ պատասխանողների, ԲՄԿ-երի 74%-ը, ամբուլատորիաների 96.6%-ը և բոլոր առողջության կենտրոնները կանոնավոր կերպով օդափոխվում են: Նաև, բոլոր ամբուլատորիաները, առողջության կենտրոնները և ԲՄԿ-երի 65.2%-ը կանոնավորապես մաքրվում են:

Բուժհաստատության շենքի անվտանգության պաշտոնական ստուգումներ պարբերաբար կատարվել են միայն մեկ ԲՄԿ-ում, 10 ԲԱ-ում և 2 ԱԿ-ում: Անհետաձգելի իրավիճակներին բուժանձնակազմի պատրաստվածության գործնական պարապմունքներ իրականացվել են միայն բուժհաստատությունների 15.0%-ում (մեկ ԲՄԿ-ում, 9 ԲԱ-ում և 2 ԱԿ-ում): Ոչ մի ԲՄԿ չի ունեցել սարքավորումների վիճակին հետևող և անսարքությունները վերացնող աշխատող, մինչդեռ չորս ԲԱ-ում և մեկ ԱԿ-ում նման աշխատող եղել է: Բժշկական սարքավորումները պարբերաբար նորացվել են գնահատված 81 բուժհաստատությունից միայն 14-ում՝ 13 ամբուլատորիայում և մեկ առողջության կենտրոնում:

ԲՄԿ-երի 53.2%-ում, ամբուլատորիաների 82.8%-ում և առողջության կենտրոնների 75.0%-ում բուժաշխատողները հայտնել են, որ օգտագործված ասեղները միշտ տեղադրում են սուր գործիքների ոչնչացման համար

նախատեսված տարաների մեջ: Միայն 5 ԲՄԿ-ում են այս հարցին պատասխանել՝ երբեք: Յուրաքանչյուր հիվանդի զննումից առաջ և հետո բուժաշխատողները միշտ լվանում են ձեռքերն օճառով ու ջրով բուժհաստատությունների միայն 23.5%-ում (6 ԲՄԿ-ում, 12 ԲԱ-ում և 1 ԱԿ-ում): Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության (ՊՀՅՏ) կանոնակարգերը վարակների կանխարգելման և բժշկական թափոնների վերացման վերաբերյալ առկա են եղել ԲՄԿ-երի 8.7%-ում, ամբուլատորիաների 72.4%-ում և առողջության կենտրոնների 75.0%-ում:

Աղյուսակ 7. Բուժհաստատության միջավայրը

| | ԲՄԿ % (n) | Վերադաս հաստատություններ | | | ԸՆԴԱՄԵՆԸ % (n) |
|---|--------------|--------------------------|-------------|-------------------|-------------------|
| | | ԲԱ % (n) | ԱԿ % (n) | Ընդամենը % (n) | |
| Բուժաշխատողները պահպանում են պատվաստումների «սառցե շղթայի» պահպանման վերաբերյալ լիարժեք գրանցումներ | | | | | |
| Այո | 6.4 (3) | 90.0 (27) | 75.0 (3) | 88.2 (30) | 40.7 (33) |
| Ոչ | 93.6 (44) | 10.0 (3) | 25.0 (1) | 11.8 (4) | 59.3 (48) |
| Բուժհաստատությունում ստեղծված են բավարար աշխատանքային պայմաններ բուժաշխատողների համար | | | | | |
| Այո | - | 56.7 (17) | 25.0 (1) | 52.9 (18) | 22.5 (18) |
| Ոչ | 100.0 (46) | 43.3 (13) | 75.0 (3) | 47.1 (16) | 77.5 (62) |
| Բուժհաստատությունը կանոնավոր ձևով օդափոխվում է աշխատանքային ժամերին | | | | | |
| Այո | 74.5 (35) | 96.6 (28) | 100.0 (4) | 97.0 (32) | 83.8 (67) |
| Ոչ | 25.5 (12) | 3.4 (1) | - | 3.0 (1) | 16.3 (13) |
| Բուժհաստատությունը կանոնավոր ձևով մաքրվում է | | | | | |
| Այո | 65.2 (30) | 100.0 (29) | 100.0 (4) | 100.0 (33) | 79.7 (63) |
| Ոչ | 34.8 (16) | - | - | - | 20.3 (16) |
| Լիազորված մարմինների կողմից պարբերաբար իրականացվում է բուժհաստատության շենքի անվտանգության պաշտոնական ստուգումներ | | | | | |
| Այո | 2.1 (1) | 34.5 (10) | 50.0 (2) | 36.4 (12) | 16.3 (13) |
| Ոչ | 97.9 (46) | 65.6 (19) | 50.0 (2) | 63.6 (21) | 83.8 (67) |
| Բուժհաստատությունում պարբերաբար անցկացվում են գործնական պարապունքներ անհետաձգելի իրավիճակներին պատրաստ լինելու համար | | | | | |
| Այո | 2.1 (1) | 31.0 (9) | 50.0 (2) | 33.3 (11) | 15.0 (12) |
| Ոչ | 97.9 (46) | 69.0 (20) | 50.0 (2) | 66.7 (22) | 85.0 (68) |
| Բուժհաստատությունն ունի աշխատող, որը հետևում է սարքավորումների վիճակին և վերացնում անսարքությունները | | | | | |
| Այո | - | 13.8 (4) | 25.0 (1) | 15.2 (5) | 6.3 (5) |
| Ոչ | 100.0 (47) | 86.2 (25) | 75.0 (3) | 84.8 (28) | 93.8 (75) |
| Բժշկական սարքավորումները պարբերաբար նորացվում են | | | | | |
| Այո | - | 44.8 (13) | 25.0 (1) | 42.4 (14) | 17.5 (14) |
| Ոչ | 100.0 (47) | 55.2 (16) | 75.0 (3) | 57.6 (19) | 82.5 (66) |
| Հատուկ կրնտեյներների մեջ օգտագործված ասեղների տեղադրման հաճախականությունը | | | | | |
| Միշտ | 53.2 (25) | 82.8 (24) | 75.0 (3) | 81.8 (27) | 65.0 (52) |
| Սովորաբար | 19.1 (9) | 10.3 (3) | 25.0 (1) | 12.1 (4) | 16.3 (13) |
| Երբեմն | 17.0 (8) | 6.9 (2) | - | 6.1 (2) | 12.5 (10) |
| Երբեք | 10.6 (5) | - | - | - | 6.3 (5) |

| | ԲՄԿ % (n) | Վերադաս հաստատություններ | | | ԸՆԴԱՄԵՆԸ % (n) |
|---|--------------|--------------------------|-------------|-------------------|-------------------|
| | | ԲԱ % (n) | ԱԿ % (n) | Ընդամենը % (n) | |
| Յուրաքանչյուր հիվանդի զննումից առաջ և հետո բուժաշխատողների ձեռքերը օճառով և ջրով լվանալու հաճախականությունը | | | | | |
| Միշտ | 12.8 (6) | 40.0 (12) | 25.0 (1) | 38.2 (13) | 23.5 (19) |
| Սովորաբար | 48.9 (23) | 40.0 (12) | 25.0 (1) | 38.2 (13) | 44.4 (36) |
| Երբեմն | 36.2 (17) | 20.0 (6) | 50.0 (2) | 23.5 (8) | 30.9 (25) |
| Երբեք | 2.1 (1) | - | - | - | 1.2 (1) |
| Բուժհաստատությունում կան ԱՆ սանիտարահամաճարակաբանական կանոնակարգեր վարակների կանխարգելման և բժշկական թափոնների վերացման վերաբերյալ | | | | | |
| Այո | 8.7 (4) | 72.4 (21) | 75.0 (3) | 72.7 (24) | 35.4 (28) |
| Ոչ | 91.3 (42) | 27.6 (8) | 25.0 (1) | 27.3 (9) | 64.6 (51) |

Բուժհաստատության միջավայրի գումարային միավորը հաշվարկվել է գլուխ 2-ում նկարագրված եղանակով: Ինչպես երևում է աղյուսակ 8-ից, միջավայրի միջին միավորը եղել է բավականին ցածր՝ 1.3 (առավելագույն 3.0-ից): Ամբուլատորիաների (1.9) և առողջության կենտրոնների (1.8) միավորները հավաստիորեն բարձր են եղել ԲՄԿ-երի միավորից (0.8): Մարզերի միջև հավաստի տարբերություններ չեն նկատվել:

Աղյուսակ 8. Միջավայրի միջին միավորը՝ ըստ բուժհաստատության տեսակի և մարզի

| | Միջին միավոր (n) |
|----------------------------------|---------------------|
| Բուժհաստատության տեսակը * | |
| ԲՄԿ | 0.8 (44) |
| Վերադաս հաստատություններ (ԲԱ/ԱԿ) | 1.9 (33) |
| ԲԱ | 1.9 (29) |
| ԱԿ | 1.8 (4) |
| Մարզ | |
| Արարատ | 1.4 (26) |
| Արմավիր | 1.2 (20) |
| Արագածոտն | 1.2 (31) |
| Ընդամենը | 1.3 (77) |

* տարբերությունը վիճակագրորեն հավաստի է, $p < .05$

3.4. Բուժհաստատության կառավարում

Յուրաքանչյուր բուժհաստատությունում հարցվողներին մի շարք հարցեր են տրվել հաստատության կառավարման վերաբերյալ (աղյուսակ 9): Բուժաշխատողների աշխատանքային պարտականությունները նկարագրող գրավոր փաստաթղթեր առկա են եղել ԲՄԿ-երի 8.7%-ում, ԲԱ-ների 36.7%-ում և մեկ ԱԿ-ում: Քրոնիկ հիվանդություններ ունեցող բնակչության ցուցակներ եղել են ԲՄԿ-երի 25.5%-ում, ԲԱ-ների 89.7%-ում և ԱԿ-ների 75.0%-ում:

Հարցվողների մեծ մասը (88.9%) հայտնել է, որ իրենց բուժհաստատության անձնակազմը բավարար է բնակչությանը բարձրորակ ծառայություններով ապահովելու համար: Մեծ թվով բուժհաստատություններում (91.1%) գոյություն

չունի հիվանդների բողոքներին արձագանքելու պաշտոնական գործընթաց: Առաջնային բուժօգնության ընդունված կլինիկական ստանդարտների մասին տեղեկությունները մատչելի են ԲՄԿ-երի 10.6%-ում, ԲԱ-ների 50.0%-ում և բոլոր ԱԿ-ներում: Իրենց առօրյա աշխատանքում բուժաշխատողներն այդ ստանդարտները կիրառում են 2 ԲՄԿ-ում, 13 ԲԱ-ում և 2 ԱԿ-ում:

Ըստ հաստատությունների ղեկավարների՝ բուժհաստատությունների 34.2%-ում բոլոր բուժաշխատողները գոհ են իրենց աշխատանքից, 26.3%-ում՝ աշխատանքից գոհ են որոշ բուժաշխատողներ, իսկ 39.5%-ում՝ ոչ մի բուժաշխատող գոհ չէ իր աշխատանքից: Բուժհաստատության գործունեությունը գնահատելու նպատակով բուժանձնակազմի ներքին քննարկումներ կազմակերպվում են ԲՄԿ-երի 19.1%-ում, ԲԱ-ների 86.2%-ում և ԱԿ-ների 50.0%-ում: Այս քննարկումների գրավոր արձանագրությունները հազվադեպ են պահվում (միայն 4 ԲԱ-ում և մեկ ԱԿ-ում): Գնահատված բուժհաստատությունների 18.5%-ում (6 ԲՄԿ, 6 ԲԱ և 3 ԱԿ) հայտնել են, որ ունեն աշխատողների լավ կատարողականի նյութական խրախուսման համակարգ:

ԲՄԿ-երին հատուկ հարցերն անդրադարձել են դրանց վերահսկմանը (աղյուսակ 10): Ըստ ստացված տվյալների, վերադասը մեծ մասամբ ԲՄԿ-երի բուժաշխատողներին ներգրավում է ծագած խնդիրների լուծման գործընթացում (19.6%-ում՝ միշտ, 34.8%-ում՝ սովորաբար) և ցուցաբերում աջակցություն կլինիկական հարցերում (19.6%-ում՝ միշտ, 56.5%-ում՝ սովորաբար): Վարչական աջակցություն վերադասն ավելի հազվադեպ է ցուցաբերում ԲՄԿ-երին (6.5%-ում՝ միշտ, 39.1%-ում՝ սովորաբար): Այն դեպքերում, երբ ծագող խնդիրները հնարավոր չէ լուծել տեղում, վերադասը ոչ միշտ է անում հնարավորը՝ դրանք լուծելու համար (45.7%-ում՝ երբեմն, 23.9%-ում՝ երբեք): Այն դեպքերում, երբ վերադասը փորձում է դրանք լուծել, արդյունքների մասին կանոնավորապես չի տեղեկացնում ԲՄԿ-ի բուժաշխատողներին (56.5%-ում):

Աղյուսակ 9. Բուժհաստատության կառավարում

| | ԲՄԿ % (n) | Վերադաս հաստատություններ | | | ԸՆԴԱՄԵՆԸ % (n) |
|---|--------------|--------------------------|-------------|-------------------|-------------------|
| | | ԲԱ % (n) | ԱԿ % (n) | Ընդամենը % (n) | |
| Բուժաշխատողներն ունեն իրենց աշխատանքի գրավոր նկարագրություն | | | | | |
| Այո | 8.7 (4) | 36.7 (11) | 25.0 (1) | 35.3 (12) | 20.0 (16) |
| Ոչ | 91.3 (42) | 63.3 (19) | 75.0 (3) | 64.7 (22) | 80.0 (64) |
| Բուժհաստատությունում պահվում են քրոնիկ հիվանդություններ ունեցող սպասարկվող բնակչության ցուցակները | | | | | |
| Այո | 25.5 (12) | 89.7 (26) | 75.0 (3) | 87.9 (29) | 51.3 (41) |
| Ոչ | 74.5 (35) | 10.3 (3) | 25.0 (1) | 12.1 (4) | 48.8 (39) |
| Բուժանձնակազմի ներկա քանակը բավարար է բնակչությանը բարձրորակ ծառայություններով ապահովելու համար | | | | | |
| Այո | 87.2 (41) | 93.3 (28) | 75.0 (3) | 91.2 (31) | 88.9 (72) |
| Ոչ | 12.8 (6) | 6.7 (2) | 25.0 (1) | 8.8 (3) | 11.1 (9) |
| Բուժհաստատությունում գոյություն ունի հիվանդների բողոքներին արձագանքելու պաշտոնական գործընթաց | | | | | |
| Այո | 4.3 (2) | 17.2 (5) | - | 15.2 (5) | 8.8 (7) |
| Ոչ | 95.7 (45) | 82.8 (24) | 100.0 (4) | 84.8 (28) | 91.3 (73) |
| Բուժաշխատողները կարող են տեղեկություններ ստանալ առաջնային բուժօգնության ընդունված կլինիկական ստանդարտների վերաբերյալ | | | | | |
| Այո | 10.6 (5) | 50.0 (15) | 100.0 (4) | 55.9 (19) | 29.6 (24) |
| Ոչ | 89.4 (42) | 50.0 (15) | - | 44.1 (15) | 70.4 (57) |

| | ԲՄԿ % (n) | Վերադաս հաստատություններ | | | ԸՆԴԱՄԵՆԸ % (n) |
|--|--------------|--------------------------|-------------|-------------------|-------------------|
| | | ԲԱ % (n) | ԱԿ % (n) | Ընդամենը % (n) | |
| Բուժաշխատողներն օգտագործում են այդ ստանդարտներն իրենց առօրյա աշխատանքում | | | | | |
| Այո | 4.3 (2) | 43.3 (13) | 50.0 (2) | 44.1 (15) | 21.0 (17) |
| Ոչ | 95.7 (45) | 56.7 (17) | 50.0 (2) | 55.9 (19) | 79.0 (64) |
| Բուժաշխատողները գոհ են իրենց աշխատանքից | | | | | |
| Այո, բոլորը | 21.4 (9) | 50.0 (15) | 50.0 (2) | 50.0 (17) | 34.2 (26) |
| Այո, ոմանք | 14.3 (6) | 43.3 (13) | 25.0 (1) | 41.2 (14) | 26.3 (20) |
| Ոչ | 64.3 (27) | 6.7 (2) | 25.0 (1) | 8.8 (3) | 39.5 (30) |
| Բուժաստատությունը կազմակերպում է ներքին քննարկումներ իր գործունեությունը գնահատելու համար | | | | | |
| Այո | 19.1 (9) | 86.2 (25) | 50.0 (2) | 81.8 (27) | 45.0 (36) |
| Ոչ | 80.9 (38) | 13.8 (4) | 50.0 (2) | 18.2 (6) | 55.0 (44) |
| Բուժաստատությունում պահվում են այդ քննարկումների արձանագրությունները | | | | | |
| Այո | - | 13.8 (4) | 25.0 (1) | 15.2 (5) | 6.3 (5) |
| Ոչ | 100.0 (47) | 86.2 (25) | 75.0 (3) | 84.8 (28) | 93.8 (75) |
| Բուժաստատությունում գործում է բուժաշխատողի լավ աշխատանքի նյութական խրախուսման որևէ համակարգ | | | | | |
| Այո | 12.8 (6) | 20.0 (6) | 75.0 (3) | 26.5 (9) | 18.5 (15) |
| Ոչ | 87.2 (41) | 80.0 (24) | 25.0 (1) | 73.5 (25) | 81.5 (66) |

Աղյուսակ 10. Բուժաստատության կառավարում ԲՄԿ-երում

| | Միշտ % (n) | Սովորա- բար % (n) | Երբեմն % (n) | Երբեք % (n) |
|--|---------------|-------------------------|-----------------|----------------|
| Վերահսկողը ներգրավում է բուժաշխատողներին ծագող խնդիրների լուծման գործընթացում: | 19.6 (9) | 34.8 (16) | 37.0(17) | 8.7 (4) |
| Վերահսկողը բուժաշխատողներին ցուցաբերում է աջակցություն կլինիկական հարցերում | 19.6 (9) | 56.5 (26) | 15.2 (7) | 8.7 (4) |
| Վերահսկողը բուժաշխատողներին ցուցաբերում է վարչական աջակցություն: | 6.5 (3) | 39.1 (18) | 39.1 (18) | 15.2 (7) |
| Եթե հարցերը հնարավոր չէ լուծել բուժաստատությունում, վերահսկողը փորձում է դրանք լուծել տեղական մարմինների օգնությամբ: | 2.2 (1) | 28.3 (13) | 45.7(21) | 23.9 (11) |
| Վերահսկողը հետազայում տեղեկացնում է բուժաշխատողին տվյալ հարցի կարգավիճակի մասին: | 8.7 (4) | 34.8 (16) | 43.5 (20) | 13.0 (6) |

Բուժաստատության կառավարումը գնահատող գումարային միավորը հաշվարկվել է գլուխ 2-ում նկարագրված եղանակով: Աղյուսակ 11-ում ներկայացված են բուժաստատության կառավարման միջին միավորները՝ ըստ բուժաստատության տեսակի և մարզի: ԲՄԿ-երի միավորը հավաստիորեն ավելի ցածր է մյուս տեսակի հաստատությունների միավորներից (0.9՝ ԲՄԿ-երի համար,

1.6-ական՝ ԲԱ-ների և ԱԿ-ների, առավելագույն 3.0-ից): Երեք մարզերի բուժհաստատությունները, ըստ իրենց հավաքած կառավարման միավորների, հավաստիորեն չեն տարբերվում:

Աղյուսակ 11. Բուժհաստատության կառավարում՝ միջին միավորներ ըստ բուժհաստատության տեսակի և մարզի

| | Բուժհաստատության կառավարման միավորը, միջին (n) | |
|----------------------------------|--|-------------|
| Բուժհաստատության տեսակը * | | |
| ԲՄԿ | 0.9 | (40) |
| Վերադաս հաստատություններ (ԲԱ/ԱԿ) | 1.6 | (33) |
| ԲԱ | 1.6 | (29) |
| ԱԿ | 1.6 | (4) |
| Մարզ | | |
| Արարատ | 1.3 | (24) |
| Արմավիր | 1.3 | (19) |
| Արագածոտն | 1.1 | (30) |
| Ընդամենը | 1.2 | (73) |

* տարբերությունը վիճակագրորեն հավաստի է, $p < .05$

3.5. Առաջնային և երկրորդային կանխարգելում

Առաջնային և երկրորդային կանխարգելման միջոցառումների տարածվածությունը ներկայացված է աղյուսակ 12-ում: Երեխաների ինունիզացիան ամենից տարածված կանխարգելման միջոցառումն է, որին ենթարկվում է համապատասխան տարիքի սպասարկվողների ավելի քան 75.0%-ը գնահատված բուժհաստատությունների 88.8%-ում: Համեմատաբար լայնորեն տարածված մյուս միջոցառումը դեռահաս աղջիկների հետազոտությունն է և նրանց հետ զրույցը վերարտադրողական առողջության թեմաներով (իրականացվում է համապատասխան սպասարկվողների ավելի քան 75.0%-ի համար՝ գնահատված բուժհաստատությունների 43.8%-ում): Աղյուսակում ներկայացված մնացած միջոցառումները սպասարկվողների ավելի քան 75%-ի ընդգրկմամբ իրականացվում են հաստատությունների 40%-ից էլ պակաս մասում:

Աղյուսակ 13-ը ներկայացնում է կանխարգելման միջոցառումները ամբուլատորիաներում և առողջության կենտրոններում: Հղի կանանց ավելի քան 75%-ը հղիության ընթացքում հետազոտվում է առնվազն չորս անգամ այս հաստատությունների 65.6%-ում: Ջարկերակային գերճնշմամբ և սրտի իշեմիկ հիվանդությամբ տառապող հիվանդների ավելի քան 75%-ն անցնում է կանոնավոր (առնվազն տարին մեկ անգամ) ԷՍԳ հետազոտություն այս հաստատությունների 59.4%-ում: Հաջորդ համեմատաբար տարածված միջոցառումներն են արյան հեմոգլոբինի հետազոտությունը 9 ամսականում (բուժհաստատությունների 50%-ում այս հետազոտությանը ենթարկվում են համապատասխան տարիքի բնակչության ավելի քան 75%-ը) և շաքարախտով հիվանդների աչքի հատակի ստուգումը առնվազն տարին մեկ անգամ, որն իրականացվում է հիվանդների ավելի քան 75%-ի մոտ՝ գնահատված ամբուլատորիաների և առողջության կենտրոնների 34.4%-ում: Աղյուսակ 13-ում ներկայացված մյուս կանխարգելիչ միջոցառումները հաճախ չեն իրականացվում. օրինակ՝ բուժհաստատությունների միայն 3.1%-ում է 30-60 տարեկան կանանց ավելի քան 25%-ն անցնում արգանդի վզիկի բջջաբանական ՊԱՊ թեստ՝ առնվազն երեք տարին մեկ անգամ:

Աղյուսակ 12. Առաջնային և երկրորդային կանխարգելման միջոցառումները 3-1 գոտու բուժաստատություններում

| | >75% % (n) | 50-75% % (n) | 25- 50% % (n) | <25% % (n) |
|--|---------------|-----------------|------------------|---------------|
| 24 ամսական լիովին պատվաստված մանուկները | 88.8 (71) | 6.3 (5) | 3.8 (3) | 1.3 (1) |
| 15-17 տարեկան դեռահաս աղջիկները, ովքեր հետազոտվել և ստացել են խորհրդատվություն վերարտադրողական առողջության վերաբերյալ | 43.8 (35) | 21.3 (17) | 11.3 (9) | 23.8 (19) |
| Չդի կանայք, ովքեր ստացել են առողջ հղիության, կրծքով կերակրման, երեխայի խնամքի, անձնական և սեռական հիգիենայի մասին խորհրդատվություն | 38.0 (30) | 22.8 (18) | 15.2 (12) | 24.1(19) |
| Երկրորդ տիպի շաքարախտով հիվանդները, ովքեր անցել են արյան մեջ շաքարի մակարդակի զննում՝ առնվազն ամիսը մեկ անգամ | 36.3 (29) | 16.3 (13) | 22.5 (18) | 25.0 (20) |
| Սպասարկվող հղիները, ովքեր կատարել են իրենց առաջին նախածննդյան այցելությունը հղիության առաջին եռամսյակում | 36.3 (29) | 27.5 (22) | 23.8 (19) | 12.5 (10) |
| Երեխաները, ովքեր հանձնել են մեզի և արյան ընդհանուր քննություն 12 ամսականում | 31.3 (25) | 13.8 (11) | 18.8 (15) | 36.3 (29) |
| 20 տարեկանից բարձր բնակչությունը, որը ստացել է արյան ճնշման կանխարգելիչ չափում առնվազն տարին մեկ անգամ և ունի այդ չափումների արդյունքների մասին գրանցում իր բժշկական քարտում | 1.3 (1) | 8.8 (7) | 25.0 (20) | 65.0 (52) |

Աղյուսակ 13. Առաջնային և երկրորդային կանխարգելման միջոցառումները 3-1 գոտու վերադաս բուժաստատություններում

| | > 75% % (n) | 50-75% % (n) | 25- 50% % (n) | < 25% % (n) |
|---|----------------|-----------------|------------------|----------------|
| Այն հղի կանայք, ովքեր հետազոտվել են ամենաքիչը չորս անգամ՝ հղիության ընթացքում | 65.6 (21) | 18.8 (6) | 6.3 (2) | 9.4 (3) |
| Արյան բարձր ճնշման և պսակաձև զարկերակների հիվանդությամբ այն հիվանդները, ովքեր անցել են ԷՍԳ զննում՝ առնվազն տարին մեկ անգամ | 59.4 (19) | 25.0 (8) | 15.6 (5) | - |
| Մինչև 1 տարեկան այն մանուկները, ում հեմոգլոբինը չափվել է 9 ամսականում | 50.0 (16) | 9.4 (3) | 18.8 (6) | 21.9 (7) |
| Երկրորդ տիպի շաքարախտով այն հիվանդները, ովքեր անցել են աչքի հատակի ստուգում՝ առնվազն տարին մեկ անգամ | 34.4 (11) | 25.0 (8) | 34.4 (11) | 6.3 (2) |
| Նախադպրոցական տարիքի այն երեխաները, ովքեր ստացել են նյարդաբանի և ակնաբույժի կանխարգելիչ զննում | 25.0 (8) | 9.4 (3) | 18.8 (6) | 46.9 (15) |
| Սրտի իշեմիկ հիվանդություն ունեցող այն հիվանդները, ովքեր անցել են արյան խոլեստերինի որոշում (անալիզ) առնվազն տարին մեկ անգամ | 18.8 (6) | 18.8 (6) | 25.0 (8) | 37.5 (12) |

| | > 75% % (n) | 50-75% % (n) | 25- 50% % (n) | < 25% % (n) |
|--|----------------|-----------------|------------------|----------------|
| 40 տարեկանից բարձր այն կանայք, ովքեր անցել են կրծքագեղձի կլինիկական քննություն ամենաքիչը տարին մեկ անգամ | 6.3 (2) | 6.3 (2) | 12.5 (4) | 75.0 (24) |
| 40 տարեկանից բարձր այն բնակչությունը, ում արյան խուլեսթերինի մակարդակը չափվել է առնվազն տարին մեկ անգամ | 3.2 (1) | 3.2 (1) | 16.1 (5) | 77.4 (24) |
| 30-60 տարեկան այն կանայք, ովքեր անցել են արգանդի վզիկի բջջաբանական ՊԱՊ թեստ ամենաքիչը երեք տարին մեկ անգամ | - | - | 3.1 (1) | 96.9 (31) |

Հաշվարկվել է նշված կանխարգելման միջոցառումների իրականացման գումարային միավորը: Աղյուսակ 14-ը ներկայացնում է այդ միավորի միջին արժեքների բաշխումը՝ ըստ բուժաստատության տեսակների և մարզերի: ԲՄԿ-երի և վերադաս հաստատությունների միջև տարբերությունը վիճակագրորեն հավաստի չի եղել: Կանխարգելման միջին միավորը հավաստիորեն բարձր է եղել Արմավիրում (2.1)՝ համեմատած մյուս երկու մարզերի հետ (1.3):

Աղյուսակ 14. Առաջնային և երկրորդային կանխարգելում՝ միջին միավորը ըստ բուժաստատության տեսակի և մարզի

| | Կանխարգելման միավոր միջին (n) |
|----------------------------------|----------------------------------|
| Բուժաստատության տեսակը * | |
| ԲՄԿ | 1.4 (46) |
| Վերադաս հաստատություններ (ԲԱ/ԱԿ) | 1.7 (31) |
| ԲԱ | 1.7 (27) |
| ԱԿ | 1.7 (4) |
| Մարզ | |
| Արարատ | 1.3 (24) |
| Արմավիր | 2.1 (21) |
| Արագածոտն | 1.3 (32) |
| Ընդամենը | 1.5 (77) |

* տարբերությունը վիճակագրորեն հավաստի է, $p < .05$

3.6. Կատարողականի ընդհանուր միավոր

Բոլոր բաժինների միջին միավորները գումարելով և բաժանելով բաժինների թվի վրա՝ հաշվարկվել է կատարողականի ընդհանուր միավորը: Աղյուսակ 15-ը ներկայացնում է կատարողականի ընդհանուր միավորը՝ ըստ բուժաստատության տեսակի և մարզի: Այն հավաստիորեն տարբերվում է տարբեր տեսակի բուժաստատությունների միջև, սակայն չի տարբերվում մարզերի միջև: Հավելված 2-ը ներկայացնում է յուրաքանչյուր բաժնի միջին միավորները և կատարողականի ընդհանուր միավորները՝ ըստ գնահատված բուժաստատությունների:

Աղյուսակ 15. Կատարողականի ընդհանուր միջին միավորը՝ ըստ բուժաստատության տեսակի և մարզի

| | Կատարողականի միավոր միջին (n) |
|----------------------------------|-------------------------------------|
| Բուժաստատության տեսակը * | |
| ԲՄԿ | 1.1 (36) |
| Վերադաս հաստատություններ (ԲԱ/ԱԿ) | 1.8 (29) |
| ԲԱ | 1.8 (26) |
| ԱԿ | 2.0 (3) |
| Մարզ | |
| Արարատ | 1.5 (22) |
| Արմավիր | 1.6 (15) |
| Արագածոտն | 1.3 (28) |
| Ընդամենը | 1.4 (65) |

* տարբերությունը վիճակագրորեն հավաստի է, $p < .05$

Աղյուսակ 16-ը ներկայացնում է ելակետային գնահատումների արդյունքում ստացված կատարողականի ընդհանուր միջին միավորների համեմատությունը 1-ին, 2-րդ և 3-1 գոտիների բուժաստատություններում. ինչպես ընդհանուր միջին միավորը, այնպես էլ շատ բաժինների միջին միավորները նշված գոտիներում եղել են միանման:

Աղյուսակ 16. Կատարողականի ելակետային միավորները (ըստ բաժինների և ընդհանուր) տարբեր գոտիներում (1-ին, 2-րդ և 3-1)

| Բաժին | 1-ին գոտի (2006) միջին (n) | 2-րդ գոտի (2007) միջին (n) | 3-1 գոտի (2008) միջին (n) |
|---|----------------------------------|----------------------------------|---------------------------------|
| Բուժօգնության մատչելիություն/տրամադրում | 2.0 (58) | 2.0 (55) | 2.1 (80) |
| Բուժաշխատողի փոխհարաբերությունները այցելուների և բնակչության հետ | 1.1 (56) | 1.0 (55) | 0.9 (77) |
| Միջավայր | 1.3 (56) | 1.2 (54) | 1.3 (77) |
| Բուժաստատության կառավարում | 1.4 (56) | 1.3 (53) | 1.2 (73) |
| Առաջնային և երկրորդային կանխարգելում | 1.3 (53) | 1.3 (54) | 1.5 (77) |
| Ընդհանուր կատարողական | 1.4 (42) | 1.3 (48) | 1.4 (65) |

3.7. ԱԱՊ համակարգի բուժաշխատողների մասնագիտական կարողությունները

3.7.1 Համայնքային բուժքույրեր

Գործիքների օգտագործումը

ՄԳ թիմը գնահատել է ԱԱՊ բուժքույրերի տեխնիկական պատրաստվածությունը (աղյուսակ 17): Առօրյա պրակտիկայում կանոնավոր կերպով օգտագործվող գործիքների թվում են եղել ստեթոֆոնենդոսկոպը (91.1%) և տոնոմետրը (98.2%): Հարցվողների 7.1%-ը կանոնավորապես օգտագործել է գլյուկոմետրը: Գրեթե 60.7%-ը կանոնավոր կերպով օգտագործել է մանկական կշեռքը, իսկ 28.6%-ը՝ մեծահասակների կշեռքը: Բուժաշխատողների կողմից կանոնավոր օգտագործվող գործիքների շարքում են եղել մանկական մանժետով տոնոմետրը և ականջի լվացման ներարկիչը: Աղյուսակ 17-ում նշված մնացած գործիքները հազվադեպ են կիրառվել, եթե երբևէ կիրառվել են:

Աղյուսակ 17. Առօրյա աշխատանքում բժշկական գործիքների կիրառման հաճախականությունը ԲՄԿ-երում

| | Պարբերաբար (%, n) | Երբեմն (%, n) | Երբեք (%, n) |
|--|----------------------|------------------|-----------------|
| Պուք կիրառում եք հետևյալ գործիքները Ձեր առօրյա աշխատանքում: | | | |
| Տոնոմետր | 98.2 (55) | - | 1.8 (1) |
| Ստեթոֆոնենդոսկոպ | 91.1 (51) | 3.6 (2) | - |
| Կշեռք – մանկական | 60.7 (34) | 1.8 (1) | 37.5 (21) |
| Կշեռք – մեծերի | 28.6 (16) | 5.4 (3) | 66.1 (37) |
| Գլյուկոմետր | 7.1 (4) | 5.4 (3) | 87.5 (49) |
| Տոնոմետր՝ մանկական մանժետով | 1.8 (1) | 7.1 (4) | 91.1 (51) |
| Ականջի լվացման ներարկիչ | 1.8 (1) | 1.8 (1) | 96.4 (54) |
| Մեզի քննության թեստ | - | 1.8 (1) | 98.2 (55) |
| Փոքր վիրաբուժական հավաքածու | - | 1.8 (1) | 98.2 (54) |
| Պիկֆլյուոմետր | - | - | 100.0 (56) |
| Կղանքում թաքնված արյան որոշման թեստ | - | - | 100.0 (55) |
| Գինեկոլոգիական հայելի | - | - | 100.0 (55) |

Ընտանեկան բուժքույրության հմտություններ

Գյուղական բուժկետերի բուժքույրերը պատասխանել են իրենց առօրյա պրակտիկայում կիրառվող հմտությունների վերաբերյալ մի շարք հարցերի: Աղյուսակ 18-ը ներկայացնում է այդ պատասխանների բաշխումը: Գնահատման համար ընտրված հմտությունները եղել են ընտանեկան բուժքույրերից ամենից շատ ակնկալվողները: Ամենահաճախ կիրառվող 12 հմտությունները եղել են. զարկերակային ճնշման չափումը (100.0%), մանկան պատվաստումը (85.7%), մանկան հասակի չափումը (76.4%), առաջին օգնությունը ալերգիկ ռեակցիաների ժամանակ (74.5%), ներերակային կաթիլային ներարկումը (75.0%), ջրազրկման կանխարգելումը (73.2%), մանկան գլխի շրջագծի չափումը (69.6%), մանկան կշռումը (69.6%), մանկան դիրքի շտկումը կրծքով կերակրման ժամանակ (62.5%),

այրվածքների մշակումը (57.1%), պառկելախոցերի կանխարգելումը և մշակումը (57.1%), շնչառության հաճախականության հաշվումը (51.8%): Աղյուսակում ներկայացված մնացած հմտությունները կիրառել են հարցվողների կեսից էլ պակաս մասը: Ոչ մի բուժքույր տուբերկուլյոզի ախտորոշման համար խորիս չի վերցրել և միայն մեկական բուժքույր է նշել, որ վերցրել է քսուկ հեշտոցից, արգանդի վզիկից կամ միզուկից, կատարել է միզապարկի կաթետերիզացիա, տրամադրել է ՊԱՊ թեստի կատարման խորհրդատվություն, կամ կատարել է երեխայի սիրտ-թոքային վերակենդանացում: Երկուական բուժքույր հայտնել են, որ բկանցքից քսուկ են վերցրել և կատարել են վահանագեղձի շոշափում:

ՄԳ թիմը հաշվարկել է բուժքրոջ գործնական հմտությունների գումարային միավորը, որն իրենից ներկայացնում է կիրառվող հմտությունների տոկոսը այս 32 մասնագիտական հմտություններից: Գործնական հմտությունների միջին միավորը ողջ ընտրանքի համար եղել է 35.5% (աղյուսակ 19), ընդ որում, Արարատի և Արմավիրի բուժքույրերի միջին միավորների համեմատությամբ (41.5% և 47.1%՝ համապատասխանաբար) Արագածոտի բուժքույրերի գործնական հմտությունների միավորը եղել է ամենացածրը (25.1%):

Այս կամ այն հմտությունը չկիրառելու պատճառները նույնպես ուսումնասիրվել են (աղյուսակ 20): Բուժքույրերի կողմից որևէ հմտություն չկիրառելու հիմնական պատճառների թվում նշվել է գիտելիքների պակասը (36.7%), այնուհետև՝ տվյալ հմտության կիրառման կարիքն ունեցող հիվանդների պակասը (24.8%): Շատ դեպքերում տվյալ հմտությունն անձամբ կիրառելու փոխարեն բուժքույրը գերադասել է ուղեգրել հիվանդին այլ բուժհաստատություն (20.2%) կամ այլ բուժաշխատողի մոտ (1.1%): Բուժքույրերի 17.2%-ը նշել է, որ իր բուժհաստատությունում չկան տվյալ հմտությունը կիրառելու համար անհրաժեշտ գործիքներ կամ պարագաներ:

Աղյուսակ 18. Բուժքույրերի հմտությունների կիրառումը առօրյա պրակտիկայում, 3-1 գոտի

| Հմտություններ | Այո % (n) | Հմտության կիրառումը (#) վերջին 2 շաբաթում միջին (տատանման տիրույթ) |
|--|--------------|---|
| 1. Զարկերակային ճնշման չափում | 100.0 (56) | 26.6 (5-150) |
| 2. Մանկան պատվաստում | 85.7 (48) | 10.9 (0-33) |
| 3. Մանկան հասակի չափում | 76.4 (42) | 10.6 (0-30) |
| 4. Առաջին օգնություն ավերգիկ ռեակցիաների դեպքում | 74.5 (41) | 0.7 (0-4) |
| 5. Ներերակային կաթիլային ներարկում | 75.0 (42) | 5.7 (0-25) |
| 6. Ջրազրկման կանխարգելում ռեհիդրոնի միջոցով | 73.2 (41) | 0.9 (0-5) |
| 7. Մանկան գլխի շրջագծի չափում | 69.6 (39) | 10.1 (0-28) |
| 8. Մանկան կշռում | 69.6 (39) | 11.2 (2-30) |
| 9. Մանկան կրծքով կերակրման դիրքի շտկում | 62.5 (35) | 1.6 (0-7) |
| 10. Այրվածքների մշակում | 58.2 (32) | 0.2 (0-1) |
| 11. Պառկելախոցերի կանխարգելում և մշակում | 57.1 (32) | 0.5 (0-5) |
| 12. Շնչառության հաճախականության հաշվում | 51.8 (29) | 1.9 (0-7) |
| 13. Թոքախտի կանխարգելման խորհրդատվություն | 37.5 (21) | 1.3 (0-10) |
| 14. Մահամերձ հիվանդի խնամքի կազմակերպում | 35.7 (20) | 0.3 (0-1) |

3-1 գոտու նպատակային բուժաստատությունների կատարողականի ելակետային գնահատում

| Հմտություններ | Այո % (n) | Հմտության կիրառումը (#) վերջին 2 շաբաթում միջին (տատանման տիրույթ) |
|--|----------------------|---|
| 15. Ընտանիքի պլանավորման խորհրդատվություն | 33.9 (19) | 1.1 (0-3) |
| 16. Հղի կնոջ կշռում | 32.1 (18) | 2.8 (0-7) |
| 17. Կոտրվածքների անշարժացում | 25.0 (14) | 0.3 (0-4) |
| 18. Ինսուլինի ներարկում | 23.2 (13) | 3.1 (0-25) |
| 19. Կրծքագեղձի ինքնազննման տեխնիկայի դասավանդում | 21.4 (12) | 1.7 (0-4) |
| 20. Թոքախտով հիվանդի բուժման վերահսկում | 12.5 (7) | 2.3 (0-11) |
| 21. Գլյուկոզայի չափում արյան մեջ | 10.7 (6) | 2.1 (0-7) |
| 22. Սեռավարակով, ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ով հիվանդի խորհրդատվություն | 8.9 (5) | 0.6 (0-3) |
| 23. Մեծահասակի սիրտ-թոքային վերակենդանացում | 7.1 (4) | 0 |
| 24. Մեզի սթրիպային քննություն | 5.4 (3) | 4.8 (0-14) |
| 25. Հղի կնոջ արգանդի հատակի բարձրության որոշում | 5.4 (3) | 4.7 (3-6) |
| 26. Վահանագեղձի շոշափում | 3.6 (2) | 1.0 (1-1) |
| 27. Բկանցքից քսուկ վերցնել | 3.6 (2) | 0 |
| 28. Երեխայի սիրտ-թոքային վերակենդանացում | 1.8 (1) | 0 |
| 29. ՊԱՊ թեստի կատարման խորհրդատվություն | 1.8 (1) | 1.0 (0-2) |
| 30. Միզապարկի կաթտերիզացիա | 1.8 (1) | 3.0 (3-3) |
| 31. Հեշտոցից, արգանդի վզիկից և միզուկից քսուկ վերցնել | 1.8 (1) | 0 |
| 32. Խորխ վերցնել թոքախտի ախտորոշման համար | 0 | 0 |

Աղյուսակ 19. Ընտանեկան բուժքույրերի գործնական հմտությունների միջին միավորը՝ ըստ մարզերի

| | Արարատ | Արմավիր | Արագածոտն | Ընդամենը |
|----------------------------------|---------------|----------------|------------------|-----------------|
| Տոկոսային միավորը (միջին տոկոսը) | 41.5 | 47.1 | 25.1 | 35.5 |

Աղյուսակ 20. Ընտանեկան բուժքույրերի՝ որոշակի հմտություններ չկիրառելու պատճառները 3-1 գրտում

| | Ուղեգրել է հիվանդին այլ. | | Պակաս՝ | | Սճան հիվանդ չի եղել |
|--|--------------------------|------------------------|-------------------|------------------------------|---------------------|
| | բուժհաստատություն % (n) | բուժաշխատողի մոտ % (n) | գիտելիքի % (n) | գործիքների/ պարագաների % (n) | |
| 1. Խորի վերցնել թրջախտի ախտորոշման համար | 53.6 (30) | - | 25.0 (14) | 1.8 (1) | 19.6 (11) |
| 2. Երեխայի սիրտ-թոքային վերակենդանացում | 20.0 (11) | - | 60.0 (33) | - | 20.0 (11) |
| 3. Միզապարսի կաթետերիզացիա | 21.8 (12) | - | 60.0 (33) | 9.1 (5) | 9.1 (5) |
| 4. Հեշտոցից, արգանդի վզիկից և միզուկից բսուկ վերցնել | 43.6 (24) | - | 34.5 (19) | 20.0 (11) | 1.8 (1) |
| 5. ՊՎՊ թեստի կատարման խորհրդատվություն | 18.5 (10) | - | 72.2 (39) | 1.9 (1) | 7.4 (4) |
| 6. Բկանցքից բսուկ վերցնել | 55.6 (30) | - | 24.1 (13) | 16.7 (9) | 3.7 (2) |
| 7. Մեզի սթրիպային քննություն | 3.8 (2) | - | 24.5 (13) | 69.8 (37) | 1.9 (1) |
| 8. Վահանագեղձի շոշափում | 28.3 (15) | 3.8 (2) | 56.6 (30) | - | 11.3 (6) |
| 9. Մեծահասակի սիրտ-թոքային վերակենդանացում | 21.2 (11) | - | 59.6 (31) | - | 19.2 (10) |
| 10. Հղի կնոջ արգանդի հատակի բարձրության որոշում | 36.5 (19) | 5.8 (3) | 30.8 (16) | 26.9 (14) | - |
| 11. Մեռավարակով, ՄԻՎ/ՉԻԱՀ հիվանդի խորհրդատվություն | 17.6 (9) | - | 41.2 (21) | - | 41.2 (21) |
| 12. Գլուկոզայի չափում արյան մեջ | - | - | 22.0 (11) | 76.0 (38) | 2.0 (1) |
| 13. Թոքախտով հիվանդի բուժման վերահսկում | 10.2 (5) | - | 26.5 (13) | - | 63.3 (31) |
| 14. Կրծքագեղձի ինքնագնման տեխնիկայի դասավանդում | 14.0 (6) | - | 76.7 (33) | - | 9.3 (4) |
| 15. Կտրվածքների անշաղժացում | 16.7 (7) | - | 9.5 (4) | 33.3 (14) | 40.5 (17) |
| 16. Ինտուլինի ներարկում | 2.6 (1) | - | 15.4 (6) | - | 82.1 (32) |
| 17. Ընտանիքի պլանավորման խորհրդատվություն | 35.1 (13) | - | 45.9 (17) | - | 18.9 (7) |
| 18. Հղի կնոջ կշռում | 24.3 (9) | 2.7 (1) | 2.7 (1) | 67.6 (25) | 2.7 (1) |
| 19. Մահամեժը հիվանդի խնամքի կազմակերպում | - | - | 35.1 (13) | - | 64.9 (24) |
| 20. Թոքախտի կանխարգելման խորհրդատվություն | 11.4 (4) | - | 65.7 (23) | - | 22.9 (8) |
| 21. Շնչառության հաճախականության հաշվում | 11.1 (3) | - | 44.4 (12) | 3.7 (1) | 40.7 (11) |
| 22. Պառկելախոցերի կանխարգելում և մշակում | - | - | 20.0 (5) | 8.0 (2) | 72.0 (18) |
| 23. Լյուվածքների մշակում | 22.7 (5) | - | 9.1 (2) | 13.6 (3) | 54.5 (12) |
| 24. Մանկան կրծքով կերակրման դիրքի շտկում | - | 4.8 (1) | 47.6 (10) | - | 47.6 (10) |
| 25. Մանկան կշռում | - | 5.9 (1) | - | 94.1 (16) | - |
| 26. Մանկան գլխի շրջագծի չափում | - | 6.3 (1) | 18.8 (3) | 56.3 (9) | 18.8 (3) |
| 27. Զրագրվման կանխարգելում ռեհիդրոնի միջոցով | - | - | 12.5 (2) | - | 87.5 (14) |
| 28. Առաջին օգնություն այլերգիկ ռեակցիաների դեպքում | 21.4 (3) | - | 14.3 (2) | 7.1 (1) | 57.1 (8) |
| 29. Ներերակային կաթիլային ներարկում | 21.4 (3) | - | 7.1 (1) | 7.1 (1) | 64.3 (9) |
| 30. Մանկան հասակի չափում | - | 7.1 (1) | 21.4 (3) | 71.4 (10) | - |
| 31. Մանկան պատվաստում | 12.5 (1) | 37.5 (3) | - | - | 50.0 (4) |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 20.2 (233) | 1.1 (13) | 36.7 (423) | 17.2 (198) | 24.8 (286) |

Դիտարկումներ

Համայնքային բուժքույրերի հմտությունները գործնականում գնահատվել են երկու ստանդարտացված միջամտությունների՝ զարկերակային ճնշման չափման և գլյուկոմետրիայի, դիտարկման միջոցով: Յուրաքանչյուր հմտություն գնահատվել է 14-ական քայլից բաղկացած դիտարկման ստուգաթերթիկի միջոցով, որը թույլ է տվել տվյալներ ստանալ բուժքրոջ՝ հիվանդի հետ շփման կարողությունների, նրա գործնական հմտությունների, ինչպես նաև՝ միջամտության ընթացքում նրա կողմից սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման վերաբերյալ (տե՛ս դիտարկման ստուգաթերթիկները հավելված 1-ում): 54 բուժքույր են դիտարկվել զարկերակային ճնշում չափելիս (երկու բուժքույր չեն դիտարկվել, քանի որ նրանց տոնոմետրերը սարքին չեն եղել): Միայն երկու բուժքույր են դիտարկվել գլյուկոմետրիա իրականացնելիս, քանի որ մյուսները գլյուկոմետր չեն ունեցել:

Աղյուսակ 20-ը ներկայացնում է դիտարկված բուժքույրերի՝ զարկերակային ճնշման չափման կատարողականը: Բուժքույրերի մեծամասնությունը (83%-ը) հարգանքով ողջունել է այցելուին, նախքան միջամտությունը սկսելը բացատրել է նրան անելիքը և ստացել այցելուի համաձայնությունը: Մնացած քայլերի մեծ մասը հազվադեպ կամ ոչ ճիշտ են կատարվել: Բուժքույրերի միայն 16.7%-ն է առաջարկել այցելուին՝ 3-5 րոպե հանգիստ նստել, և միայն մեկ բուժքույր է ձեռքերը լվացել և չորացրել մինչև գործողությունը սկսելը: Միայն երեք բուժաշխատող են կրկնել չափումը մյուս ձեռքի վրա: Բացի երկու բուժքրոջից, ոչ ոք չի կարողացել ճիշտ գրանցել երկու ձեռքերից ստացված չափման արդյունքները: Միայն երկու բուժքույր են մաքրել ստեթոսկոպի թաղանթը սպիրտով թրջված խծուծով: Ոչ մի բուժքույր չի լվացել ձեռքերը գործողության ավարտից հետո:

Աղյուսակ 22-ը ներկայացնում է ընդհանուր միավորների բաշխումը (14 քայլերից): Չնայած ոչ մի բուժքույր 0 միավոր չի ստացել, նրանց կեսից էլ պակաս մասն է գեթ 3 քայլ ճիշտ կատարել: Ոչ մեկը 9 միավորից բարձր չի ստացել (հնարավոր 14 միավորից): Ողջ ընտրանքի, ինչպես նաև՝ յուրաքանչյուր մարզի համար հաշվարկվել են միջին գումարային միավորներ (աղյուսակ 23): Զարկերակային ճնշման չափման միջին ընդհանուր միավորը կազմել է 3.9 (մեդիանը = 3):

Երկու բուժքույրերը, ում դիտարկել են գլյուկոմետրիայի իրականացման ժամանակ, հավաքել են համապատասխանաբար 6 և 8 միավոր: Դիտարկումների փոքր թիվը թույլ չի տվել կատարել որևէ ընդհանրացում կամ վերլուծություն:

Աղյուսակ 21. 3-1 գոտում համայնքային բուժքույրերի զարկերակային ճնշման չափման դիտարկումը՝ ըստ քայլերի

| Քայլ | % (n) |
|--|--------------|
| 1. Հարգանքով և բարյացակամությամբ ողջունեց այցելուին, բացատրեց անելիքը: | 83.3 (45) |
| 2. Ստացավ այցելուի համաձայնությունը: | 83.3 (45) |
| 3. Առաջարկեց այցելուին հանգիստ նստել 3-5 րոպե և չխոսել: | 16.7 (9) |
| 4. Լվաց և չորացրեց ձեռքերը: | 1.9 (1) |
| 5. Այցելուին տվեց հարմար դիրք: | 28.3 (15) |
| 6. Մանժետոն ամրացրեց այցելուի մերկացրած բազուկին: | 37.0 (20) |
| 7. Շոշափեց բազկային զարկերակը արմնկափոսի շրջանում, որպեսզի ճիշտ տեղադրի ստեթոսկոպը: | 9.6 (5) |
| 8. Մանժետի մեջ արագորեն օդ մղեց մինչև մանժետի ճնշումը լինի 30 մմ սս.-ով պվելի այն նակարդակից, երբ վերանում է անոթազարկը: | 22.2 (12) |

| Քայլ | % (n) |
|---|-----------|
| 9. Ստեթոսկոպի թաղանթը տեղադրեց բազկային զարկերակի վրա: | 38.9 (21) |
| 10. Մանժետը թուլացրեց դանդաղորեն, որպեսզի ստեթոսկոպով որսա բազկային զարկերակի տոների ի հայտ գալու և անհետանալու պահերը: | 66.7 (36) |
| 11. Արյան ճնշման չափումը կրկնեց մյուս ձեռքի վրա: | 5.6 (3) |
| 12. Գրանցեց ստացված արդյունքները: | 3.7 (2) |
| 13. Ստեթոսկոպի թաղանթը նաքրեց սպիրտով թրջված խծուծով: | 3.7 (2) |
| 14. Լվաց և չորացրեց ձեռքերը: | - |

Աղյուսակ 22. Զարկերակային ճնշման չափման միջին միավորների բաշխումը 3-1 գոտում (առավելագույն միավորը՝ 14)

| Զարկերակային ճնշման չափման միավորը | % (n) |
|------------------------------------|-------------------|
| 1 | 5.9 (3) |
| 2 | 19.6 (10) |
| 3 | 27.5 (14) |
| 4 | 13.7 (7) |
| 5 | 11.8 (6) |
| 6 | 9.8 (5) |
| 7 | 3.9 (2) |
| 8 | 5.9 (3) |
| 9 | 2.0 (1) |
| Ընդամենը | 100.0 (51) |

Աղյուսակ 23. Զարկերակային ճնշման չափման միջին միավորների բաշխումը 3-1 գոտում՝ ըստ մարզերի

| | Արարատ % (n) | Արմավիր % (n) | Արագածոտն % (n) | Ընդամենը % (n) |
|----------------------------|-----------------|------------------|--------------------|-------------------|
| Միջին ընդհանուր միավոր (%) | 21.4 (14) | 30.1 (14) | 30.8 (23) | 28.0 (51) |

3.7.2 Ամբուլատորիաների, առողջության կենտրոնների և պոլիկլինիկաների բժշկներ

Գործիքների օգտագործումը

Աղյուսակ 24-ը ներկայացնում է առավել տարածված բժշկական գործիքների կիրառումը ամբուլատորիաների և առողջության կենտրոնների 51 բժիշկների կողմից: Ամեն օր կիրառվող գործիքներն են ստեթոֆոնենդոսկոպը և տոնոմետրը (100%): Հաճախակի օգտագործվող գործիքների շարքում են մեծահասակների կշեռքը (90.2%), մանկական կշեռքը (86.3%), օտոսկոպը (70.6%), գլյուկոմետրը (66.7%), ԷՍԳ-ի սարքը (58.8%), ականջի լվացման ներարկիչը և օֆթալմոսկոպը (52.9%): Աղյուսակում նշված մնացած գործիքներն ավելի քիչ են օգտագործվում: Հազվադեպ կիրառվողներից են կղանքում թաքնված արյան առկայության որոշման թեստը, պիկֆլուոմետրը և կամերտոնը (աղյուսակ 24):

| Աղյուսակ 24. Առավել տարածված բժշկական գործիքների կիրառումը ԲԱ-ների և ԱԿ-ների բժշկների կողմից, 3-1 գտտի Օգտագործման հաճախականությունը | Օգտագործման հաճախականությունը (n = 51) | | | | Կանոնավոր կամ երբեմն օգտագործել է | | |
|---|---|-------------------|----------------|-------------------------------|-----------------------------------|----------------------|--|
| | Կանոնավոր % (n) | Հազվադեպ % (n) | Երբեք % (n) | Ընտանեկան բժիշկը (n=43) | Թերապևտը (n=3) | Մանկաբույժը (n=5) | |
| Ստերոֆոններոսկոպ | 100.0 (51) | - | - | 100.0 (43) | 100.0 (3) | 100.0 (5) | |
| Տոնոմետր | 100.0 (51) | - | - | 100.0 (43) | 100.0 (3) | 100.0 (5) | |
| Մեծերի կշեռք | 90.2 (46) | 3.9 (2) | 5.9 (3) | 95.3 (41) | 66.7 (2) | 100.0 (5) | |
| Մանկական կշեռք | 86.3 (44) | 5.9 (3) | 7.8 (4) | 95.3 (41) | 33.3 (1) | 100.0 (5) | |
| Օտոսկոպ | 70.6 (36) | 17.6 (9) | 11.8 (6) | 97.7 (42) | 33.3 (1) | 40.0 (2) | |
| Գլուկոմետր | 66.7 (34) | 15.7 (8) | 17.6 (9) | 93.0 (40) | 33.3 (1) | 20.0 (1) | |
| ԷՍԳ-ի սարք | 58.8 (30) | 15.7 (8) | 25.5 (13) | 83.7 (36) | 33.3 (1) | 20.0 (1) | |
| Ականջի վազման ներարկիչ | 52.9 (27) | 31.4 (16) | 15.7 (8) | 97.7 (42) | 33.3 (1) | - | |
| Օֆթալմոսկոպ | 52.9 (27) | 29.4 (15) | 17.6 (9) | 93.0 (40) | 33.3 (1) | 20.0 (1) | |
| Տոնոմետր՝ մանկական մանժեստով | 43.1 (22) | 39.2 (20) | 17.6 (9) | 88.4 (38) | 33.3 (1) | 60.0 (3) | |
| Նյարդաբանական մուրճիկ | 37.3 (19) | 51.0 (26) | 11.8 (6) | 93.0 (40) | 33.3 (1) | 80.0 (4) | |
| Մեզի քննության թեստ | 25.5 (13) | 17.6 (9) | 56.9 (29) | 48.8 (21) | 33.3 (1) | - | |
| Փոքր վիրաբուժական հավաքածու | 25.5 (13) | 31.4 (16) | 43.1 (22) | 65.1 (28) | 33.3 (1) | - | |
| Գիմեկոլոգիական հայելի | 16.0 (8) | 22.0 (11) | 62.0 (31) | 42.9 (18) | 33.3 (1) | - | |
| Մանրադիտակ | 13.7 (7) | 5.9 (3) | 80.4 (41) | 23.3 (10) | - | - | |
| Կամերտոն | 8.0 (4) | 24.0 (12) | 68.0 (34) | 35.7 (15) | 33.3 (1) | - | |
| Պիկֆլյուոմետր | 4.0 (2) | 30.0 (15) | 66.0 (33) | 40.5 (17) | - | - | |
| Կղանքում թաքնված արյան որոշման թեստ | - | 2.0 (1) | 98.0 (50) | 2.3 (1) | - | - | |

Ընտանեկան բժշկության հմտություններ

Ամբուլատորիաների և առողջության կենտրոնների բժիշկներին խնդրել են նշել, թե իրենք սովորաբար կիրառում են, արդյոք, որոշ հմտություններ: Աղյուսակ 25-ը ներկայացնում է պատասխանների բաշխումն ըստ կիրառվող հմտության տեսակի և ԱԱՊ բժշկի մասնագիտության: Գրեթե բոլոր բուժաշխատողները մատուցում են առողջ ապրելակերպի վերաբերյալ խորհրդատվություն (96.1%), նշանակում են կրծքավանդակի ռենտգեն հետազոտություն տուբերկուլյոզի ռիսկի խմբում գտնվող հիվանդներին (94.1%) և բուժում են ռադիկուլիտով հիվանդների (94.1%): Բժիշկների 90%-ը նշանակում է ասպիրին պսակաձև զարկերակների հիվանդությամբ հիվանդներին, 86%-ը բուժում է մաշկի սնկային ախտահարումով հիվանդների, գնահատում է տեսողության սրությունը և հեռացնում ականջի խցանը: Բժիշկների 84%-ը բուժում է միջին ականջի բորբոքումով հիվանդների, 62.7%-ը բուժում է ակնեով հիվանդներին, 60%-ը գնահատում է պսակաձև զարկերակների հիվանդության ռիսկը սպասարկվող բնակչության շրջանում: Մոտավորապես 59%-ն իրեն վստահ է զգում անաֆիլակտիկ շոկի բուժում կատարելիս և մշակում ու կարում է վերքերը: Ներքոհիշյալ մյուս հմտությունները սովորաբար կիրառում են հարցված բժիշկների կեսից էլ պակաս մասը (աղյուսակ 25): Բժիշկներից և ոչ մեկը չի վերցնում արգանդի վզիկի քերուկ ՊԱՊ հետազոտության նպատակով:

Աղյուսակ 25. ԱԱՊ բժիշկների կողմից սովորաբար կիրառվող հմտություններն ու միջամտությունները՝ ըստ նրանց մասնագիտության

| Հմտություններ | Ընդամենը % (n) | ԸԲ (n=43) % (n) | Թերապևտ (n=3) % (n) | Մանկաբույժ (n=5) % (n) |
|---|-------------------|-----------------------|---------------------------|------------------------------|
| Մատուցում էք առողջ ապրելակերպի վերաբերյալ խորհրդատվություն | 96.1 (49) | 95.3 (41) | 100.0 (3) | 100.0 (5) |
| Նշանակում էք կրծքավանդակի ռենտգեն հետազոտություն տուբերկուլյոզի ռիսկի խմբում գտնվող հիվանդներին | 94.1 (48) | 93.0 (40) | 100.0 (3) | 100.0 (5) |
| Բուժում էք ռադիկուլիտով հիվանդների | 94.1 (48) | 100.0 (43) | 100.0 (3) | 40.0 (2) |
| Նշանակում էք ասպիրին պսակաձև զարկերակների հիվանդությամբ հիվանդներին | 90.2 (46) | 100.0 (43) | 100.0 (3) | - |
| Բուժում էք մաշկի սնկային ախտահարումով հիվանդների | 86.3 (44) | 90.7 (39) | 66.7 (2) | 60.0 (3) |
| Գնահատում էք տեսողության սրությունը | 86.3 (44) | 97.7 (42) | 33.3 (1) | 20.0 (1) |
| Հեռացնում էք ականջի խցանը | 86.3 (44) | 97.7 (42) | 33.3 (1) | 20.0 (1) |
| Իրականացնում էք միջին ականջի բորբոքումով հիվանդների բուժում: | 84.3 (43) | 88.4 (38) | 33.3 (1) | 80.0 (4) |
| Բուժում էք ակնեով հիվանդների: | 62.7 (32) | 72.1 (31) | 33.3 (1) | - |
| Գնահատում էք պսակաձև զարկերակների հիվանդության ռիսկը սպասարկվող բնակչության շրջանում: | 60.0 (30) | 61.9 (26) | 100.0 (3) | 20.0 (1) |
| Ձեզ վստահ եք զգում անաֆիլակտիկ շոկի բուժում կատարելիս: | 58.8 (30) | 60.5 (26) | 33.3 (1) | 60.0 (3) |
| Կարում և մշակում էք վերքերը: | 58.8 (30) | 65.1 (28) | 33.3 (1) | 20.0 (1) |

| Հմտություններ | Ընդամենը % (n) | ԸԲ (n=43) % (n) | Թերապևտ (n=3) % (n) | Մանկաբույժ (n=5) % (n) |
|---|-------------------|-----------------------|---------------------------|------------------------------|
| Ձեզ վստահ եք զգում սիրտ-թոքային վերակենդանացում կատարելիս: | 47.1 (24) | 41.9 (18) | 33.3 (1) | 100.0 (5) |
| Նշանակու՞մ եք ֆիզիկական վարժություններ ոսկրամկանային համակարգի ախտահարումների կանխարգելման համար: | 41.2 (21) | 41.9 (18) | 33.3 (1) | 40.0 (2) |
| Ձեզ վստահ եք զգում ծանր վնասվածքների բուժում կատարելիս: | 39.2 (20) | 41.9 (18) | 66.7 (2) | - |
| Կատարու՞մ եք մեզի էքսպրես քննություն (սթրիպներով): | 39.2 (20) | 46.5 (20) | - | - |
| Նշանակու՞մ եք ֆիզիկական վարժություններ պսակաձև զարկերակների հիվանդության կանխարգելման համար: | 33.3 (17) | 34.9 (15) | 66.7 (2) | - |
| Նշանակու՞մ եք հակաբեղմնավորիչներ և տրամադրու՞մ եք խորհրդատվություն ընտանիքի պլանավորման մեթոդների վերաբերյալ: | 31.4 (16) | 37.2 (16) | - | - |
| Կատարու՞մ եք ներաճած եղունգի հեռացում: | 25.5 (13) | 25.6 (11) | 33.3 (1) | 20.0 (1) |
| Վերցնու՞մ եք արգանդի վզիկի քերուկ ՊԱՊ հետազոտության համար: | - | - | - | - |

Հաշվարկվել է բժիշկների հմտությունների գումարային միավորը, որն իրենից ներկայացնում է կիրառվող հմտությունների տոկոսը՝ հարցված 20 հմտություններից: Աղյուսակ 26-ը ներկայացնում է բժշկի հմտությունների միջին միավորի բաշխումն ըստ մարզի և ԱՄՊ բժշկի մասնագիտության: Հմտությունների միջին գումարային միավորը ողջ ընտրանքի համար կազմել է 61.8%: Միջին գումարային միավորը հավաստիորեն չի տարբերվել ըստ մարզերի: Ընտանեկան բժիշկների հմտությունների միջին գումարային միավորը հավաստիորեն բարձր է եղել թերապևտների և մանկաբույժների միջին միավորներից:

Աղյուսակ 26. Բժիշկների հմտությունների միջին միավորը 3-1 գոտում՝ ըստ մարզերի և մասնագիտությունների

| Հմտությունների միավորը, տոկոսային միավոր (n) | |
|---|------------------|
| Մարզ | |
| Արարատ | 61.0 (21) |
| Արմավիր | 61.5 (13) |
| Արագածոտն | 63.1 (16) |
| Մասնագիտություն* | |
| ԸԲ | 65.7 (42) |
| Թերապևտ | 51.7 (3) |
| Մանկաբույժ | 35.0 (5) |
| Ընդամենը | 61.8 (50) |

* տարբերությունը վիճակագրորեն հավաստի է, $p < .05$

3.8. Հիմնական արդյունքներ

3-1 գոտու (Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզերի) նպատակային բուժհաստատությունների/բուժաշխատողների կատարողականի ելակետային գնահատման հիմնական արդյունքներն են.

- **Վերադաս բուժհաստատությունների կատարողականն ավելի լավ է, քան ԲՄԿ-երինը:** Ընդհանուր առմամբ, ինչպես նաև՝ բոլոր գնահատվող ասպարեզներում առանձին-առանձին, ԱԿ-ներն ու ԲԱ-ներն ունեցել են կատարողականի ավելի բարձր միավորներ, քան ԲՄԿ-երը (կատարողականի ընդհանուր միջին միավորն ԱԿ-ներում եղել է 2.0, ԲԱ-ներում՝ 1.8, ԲՄԿ-երում՝ 1.1):
